# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 18 (1418) ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 23, 2009
VOLUME 29, NO. 18 (1418) SATURDAY, MAY 23, 2009

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

*Մայիս 19-ին Երեւանի մէջ տեղի ունեցած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 18-րդ նիստը, որ կը վարէր Խորհուրդի նախագահ եւ ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսեան:*

*Հոգաբարձուներու խորհուրդի կազմէն ներս ընդգրկուած է նորաստեղծ Սփիւռքի նախարարի պաշտօնը: Ի պաշտօնէ խորհուրդի կազմէն ներս հաստատուած են ՀՀ ԱԺ նախագահ Յովիկ Աբրահամեան, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, Կենտրոնական Դրամատան նախագահ Արթուր Ջաւադեան, Կառավարութեան առընթեր պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Գագիկ Խաչատրեանը:*

*Ստեղծուած է Հոգաբարձուներու Խորհուրդի փոխնախագահի պաշտօն, ուր նշանակուած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախկին նախագահ Արկադի Ղուկասեան:*

*Հիմնադրամի խորհուրդի կազմէն դուրս եկած է բարերար Լուիզ Սիմոն Մանուկեան՝ բազմազբաղութեան պատճառով:*

*Հոգաբարձուներու Խորհուրդը Արա Վարդանեանին հաստատած է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վար-*

*Շար.ը էջ 19*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱՐՇԱՒԸ Կ՚ԱՐԺԱՆԱՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԼԱՅՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ
### ՀԱՐՑԱԽՈՅԶԵՐԸ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԵՆ ՀԱԳ-Ի ՅԱՂԹԱՆԱԿԸ

*Մայիս 31-ին կայանալիք Երեւանի քաղաքապետական ընտրութիւններուն հաշուուած օրեր մնացած, Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած ընդդիմադիր Հայ Ազգային Գոնկրէսի ընտրական հաւաքները կը թուին ըլլալ ամենէն բազմամարդն ու խանդավառը: Ասոր զուգահեռ, հանրային կարծիքի վստահելի հարցախոյզերը ցոյց կու տան ընդդիմադրութեան բացայայտ առաւելութիւնը իշխանական կուսակցութիւններուն նկատմամբ:*

*Այս բոլորի վառ ապացոյցը կը հանդիսանայ Հայ Ազգային Գոնկրէսի ղեկավարութեան այցելութիւնները Երեւանի տարբեր շրջանները, ուր անոնք կ՚արժանան ժողովուրդի լայն զօրակցութեան:*

*Մինչ իշխանական կուսակցութիւնները կը բաւարարուին փակ սրահներու եւ կամ ստիպողութեան տակ եկած քաղաքացիներու ներկայութեան տեղի ունեցող հանդիպումներով, ժողովուրդը ինքնակամ ներկայ կը գտնուի ընդդիմադրութեան հանրահաւաքներուն ու անոնց յաջորդող երթերուն:*

*Ընդդիմադրութեան հերթական հանրահաւաքներէն մին տեղի ունեցաւ Երկուշաբթի, Մայիս 18-ին:*

*«Մեր ընտրապայքարը պէտք չէ կապել իմ անուան հետ: Սա անձնաւորուած պայքար չէ, այսօր*



*Հայաստանի ընդդիմադրութեան Մայիս 15-ի երթը Երեւանի կեդրոնական փողոցներով*

*մենք հանդէս ենք գալիս որպէս 18 կուսակցութիւններից բաղկացած մի հզօր թիմ»,- յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեան Շէնգաւիթ համայնքի ընտրողներուն հետ կայացած հանդիպման ժամանակ:*

*Լեւոն Տէր-Պետրոսեանի գնահատմամբ.- «Պէտք է նկատի ունենալ, որ իշխանութիւնների կողմից նոյնպէս այս ընտրապայքարը անձնաւորուած չէ, եւ կարեւոր չէ՝ ով է իշխանութիւնների նախընտրած թեկնածուն: Հասկանալի է մէկ բան. գնում է պայքար Հայաստանի լճացումը պահպանելու, թալանը շարունակելու եւ Հայաստանը վերափոխելու միջեւ: Ուրիշ խնդիր, գաղտնիք այս պայքարի մէջ գոյութիւն չունի»:*

*Ոստիկանութեան գնահատմամբ իսկ, Շէնգաւիթի հաւաքին ներկայ եղած են երկու հազար*

*Շար.ը էջ 4*

## ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՔՆՆԱԴԱՏԷ ԷՐՏՈՂԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Հայաստանի իշխանութիւնները քննադատած են անցեալ շաբաթ Թուրքիոյ վարչապետ Ռեջեփ Էրտողանի Պաքուի մէջ կատարած յայտարարութիւնները՝ հայ-թրքական յարաբերութիւնները ղարաբաղեան հակամարտութեան լուծմամբ պայմանաւորելու մասին:*

*ՀՀ նախագահի մամուլի ծառայութեան հաղորդագրութեան համաձայն, անդրադառնալով Թուրքիոյ վարչապետի յայտարարութեանը Սերժ Սարգսեան ըսած է. - «Եթէ Թուրքիան ցանկանում է օգնել հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը, ապա դրա ամենաճիշդ ձեւը կը լինի այդ գործընթացին ընդհանրապէս չխառնուելը»:*

*Աւելի վաղ, նոյնանման բովանդակութեամբ յայտարարութեամբ հանդէս եկած էր ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան, որ մասնաւորապէս ըսած էր, որ Ղարաբաղեան կարգաւորման գործընթացին միջամտելու՝ Թուրքիայի փորձերը կարող են այդ գործընթացին վնաս հասցնել:*

*Էրտողան Պաքուի մէջ յայտարարած էր, թէ Թուրքիան պիտի չբանայ Հայաստանի հետ սահմանը, քանի դեռ Հայաստան դուրս չէ բերած իր զօրքերը Լեռնային Ղարաբաղէն:*

*Մայիսի 8-ին Պրահայի մէջ Թուրքիոյ նախագահ Աբդուլա Գիւլի հետ ունեցած հանդիպումէն ետք Սերժ Սարգսեանը հաւաստիացուցած էր, որ հայ-թրքական յարաբերութիւններու բարելաւման ճանապարհին նախապայմանները «բացառուած են» եւ ըսած էր, որ պայմանաւորուածութիւն ձեռք ձգուած էր, յարգելու Ապրիլ 22-ին կնքուած հայ-թրքական համաձայնագիրի կէտերը՝ «ճանապարհային քարտէզի» շուրջ:*

*Միւս կողմէ, Շաբաթ Մայիս 16-ին Սոչիի մէջ կայացած է Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի հանդիպումը Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի հետ, որու օրակարգին վրայ նաեւ եղած է Ղարաբաղի հարցը:*

## ԵՐԵՒԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԱԳ-Ի ՑՈՒՑԱԿԸ 37,2 ՏՈԿՈՍՈՎ ԱՌԱՋԱՏԱՐ

*Գերագոյն Խորհուրդ Պատգամաւորական Ակումբ հասարակական կազմակերպութիւնը կատարած է հարցախոյզ մը Երեւանի բոլոր համայքներէն ներս 1000 քաղաքացիներու մասնակցութեամբ: Հարցախոյզը կատարուած է Մայիս 14 եւ 15 օրերուն, հեռախօսի միջոցաւ եւ պատահական ընտրութեան սկզբունքով:*

*Հացախոյզին մասնակցողներուն ուղղուած առաջին հարցումը՝ Մասնակցելու՞ էք արդեօք Երեւանի աւագանու ընտրութիւններուն, տուած է հետեւել արդիւնքը.-*

| | | |
|---|---|---|
| *Այո* | - | *53,8 %* |
| *Ոչ* | - | *17,3 %* |

*Դժուարանում եմ պատասխանել - 28,9 %*

*Ընտրութիւններուն մասնակցելու պարագային ո՞ր կուսակցութեան կու տաք Ձեր ձայնը հարցումին պատասխանները տուած են հետեւեալ արդիւնքը.-*

| | |
|---|---|
| *Հայ Ազգային Գոնկրէս* | *- 37,2 %* |
| *Բարգաւաճ Հայաստան* | *- 16,2 %* |
| *Հանրապետական Կուսակցութիւն* | *- 14,7 %* |
| *ՀՅԴ* | *- 7,4 %* |
| *Ժողովրդական Կուսակցութիւն* | *- 1,6%* |
| *Օրինաց Երկիր* | *- 1,4%* |
| *ՀԱՍԿ* | *- 0,0%* |
| *Գաղտնիք է* | *- 19,2 %* |
| *Ոչ մէկուն* | *- 2,3 %* |

*Հայաստանի մէջ տիրող վախի մթնոլորտին հետեւանքով «գաղտնիք է» պատասխանողները բաւական մեծ տոկոս կը կազմեն ու կու գան երկրորդ դիրքի վրայ: Անոնց մեծ մասը ընդդիմադրութեան կողմնակիցներն են ու այդ տոկոսները եւս, ընտրութեան օրը պիտի գան աւելնալու ՀԱԳ-ի տոկոսներուն վրայ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՀԱԿ-Ի ՎԱՐԿԱՆԻՇԸ 43% Է. ԸՍՏ ԱՀԱՐՈՆ ԱԴԻԲԵԿԵԱՆԻ

*Ահարոն Ադիբեկեանի անցկացրած վերջին «սոցիոլոգիական հետազօտութիւնները» մեծ ոգեւորութիւն առաջացրեցին իշխանութիւնների շրջանում: Ամենաշատը, բնականաբար, հանրապետականներն էին հրճուել:*

*Բանն այն է, որ այդ «հետազօտութիւնների» համաձայն, ընտրութիւններին անպայման մասնակցելու պատրաստակամութիւն յայտնածների 54,2 տոկոսն իբր ձայն է տալու ՀՀԿ-ին, 21.4 տոկոսը՝ ԲՀԿ-ին, 14 տոկոսը՝ Հայ Ազգային Կոնգրեսին: Հարցումն ակնյայտօրէն ոչ Կոնգրեսն էր պատուիրել, ոչ ԲՀԿ-ն, իսկ միւս ուժերը հազիւ թէ համաձայնուէին այնպիսի «հարցում» պատուիրել, որոնց արդիւնքներով իրենք չնչին ձայներ ունեն: Այսինքն՝ ակնյայտ է, որ հարցման պատուիրատուն ՀՀԿ-ն է: Հենց միայն այս փաստը բաւական կը լինէր, որ լուրջ չվերաբերուէինք ներկայացուած թուերին, բայց այստեղ մի նրբութիւն կայ: Բանն այն է, որ Ահարոն Ադիբեկեանն ամէն դէպքում ոչ միայն շարքային «պատուէր կատարող» է, այլեւ սոցիոլոգ, եւ ուզած-չուզած՝ վարկանիշներից բացի այլ թուեր էլ է հրապարակել, որոնք, ուշադիր ընթերցելու դէպքում, ֆանտաստիկ պատկեր են բացայայտում:*

*Եւ այսպէս, ըստ այդ հարցումների, ընտրութիւններին մասնակցելու պատրաստակամութիւն է յայտնել ընտրողների միայն 36.5 տոկոսը: Թւում է՝ ամէն ինչ նորմալ է, ստանդարտ պասիւութիւն է, եւ ընտրողների հենց այդ թուից էլ պէտք է հաշուել կուսակցութիւնների վարկանիշները: Բայց խնդիրն էլ հենց այն է, որ հարցուածների 18.5 տոկոսը յայտարարել է, թէ «չեմ ասի ում կ'ընտրեմ»: Լաւ, ենթադրենք՝ նրանք իրենց նախընտրութիւնները թաքուն են պահում, բայց հասկանալի է, չէ՞, որ ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի կամ ՕԵԿ-ի համակիրները բացարձակապէս որեւէ պատճառ չունեն գաղտնի պահել իրենց քաղաքական կողմնորոշումները: Այսինքն՝ համարեա հարիւր տոկոսանոց ճշգրտութեամբ կարելի է պնդել, որ «չեմ ասի ում եմ ընտրելու» պատասխանը տուել են հենց Հայ ազգային կոնգրեսի համակիրները:*

*Նշանակո՞ւմ է դա արդեօք, որ այդ 18.5 տոկոսը պէտք է գումարել ՀԱԿ-ի «պաշտօնական» 14 տոկոսին: Ոչ, չի նշանակում, եւ ահա թէ ինչու: Ենթադրենք, հարցմանը մասնակցել է հազար մարդ (իրականում 3300 մարդ է մասնակցել, ինչը միայն մեծացնում է արդիւնքների ճշգրտութեան աստիճանը): Այդ հազար հոգուց 365-ը խոստացել է մասնակցել ընտրութիւններին, իսկ 185-ը հրաժարուել է ասել, թէ ում են ընտրելու: 365-ի 54.2 տոկոսը (ՀՀԿ-ի «վարկանիշն» է) կազմում է 198, 21.4 տոկոսը՝ 78,14 տոկոսը՝ 51: Այսինքն, հազար հոգուց ՀՀԿ-ին ձայն է տալու 198 հոգի, ԲՀԿ-ին՝ 78, ՀԱԿ-ին՝ 51: Բայց եւս 185 հոգի թաքցրել է իր քաղաքական կողմնորոշումը, այսինքն՝ ակնյայտօրէն ձայն է տալու ՀԱԿ-ին, եւ այդ ուժի ձայների թիւը հասնելու է 236-ի: Հիմա յիշենք, որ ընտրութիւններին մասնակցելու է ընտրողների ոչ թէ հարիւր, այլ 55 տոկոսը (36.5, գումարած 18.5), այսինքն՝ 550 հոգի, որոնցից 198-ը ՀՀԿ-ին է ձայն տալու, 78-ը՝ ԲՀԿ-ին, 236-ը՝ ՀԱԿ-ին: Հաշուում ենք տոկոսները, եւ ստացւում է, որ ՀԱԿ-ի իրական վարկանիշը ուղիղ 43 տոկոս է, ՀՀԿ-ինը՝ ուղիղ 36 տոկոս, ԲՀԿ-ինը՝ 14.2 տոկոս: Սա, կրկնում ենք, Ահարոն Ադիբեկեանի անցկացրած հետազօտութեան արդիւնքներն են: Եթէ ուեւէ մէկը կասկածում է թուաբանութեան կամ թուերի վերլուծութեան տրամաբանութեան վրայ, կարող է ինքնուրոյն կատարել հաշուարկները: Հաւատացնում ենք՝ արդիւնքները կը լինեն նոյնը:*

*Այդ դէպքում իշխանութիւններն ինչպէ՞ս են պատրաստւում «ապահովել ՀՀԿ թեկնածուի յաղթանակը»: Ահարոն Ադիբեկեանն այդ հարցին էլ է պատասխանում, բայց՝ հնարաւորինս մեղմ ձեւակերպումներով: Նա տեղեկացնում է, որ «ընտրատեղամասեր գնացողների իրական քանակը յայտարարուածի համեմատ սովորաբար 1.5-2 անգամ պակաս է լինում»: Հասկացա՞ք: Այսինքն, քանի մարդ մասնակցում է ընտրութիւններին, առնուազն դրա կէսի չափ իշխանութիւնները յաւելեալ թուեր են նկարում: Ինչ էք կարծում, ո՞ւմ օգտին: Բնականաբար՝ ոչ ընդդիմութեան: Այսինքն, եթէ ամէն ինչ հենց այդպէս էլ տեղի ունենայ, մայիսի 31-ին ընտրողների «մասնակցութիւնը» կը լինի ոչ թէ 55, այլ, ասենք, 72 տոկոս: ՀՀԿ-ի «ստացած» ձայներն էլ, համապատասխանաբար, կը կազմեն ոչ թէ 36, այլ 47-48 տոկոս:*

*Մի խօսքով, դատելով ամէն ինչից, Ահարոն Ադիբեկեանը լաւ էլ յստակ սոցհարցում է անցկացրել: Նա փաստօրէն հաշուել է, որ ՀԱԿ-ի վարկանիշը 43 տոկոս է, ՀՀԿ-ինը՝ 36, ԲՀԿ-ինը՝ 14.2: Աւելին. նա նոյնիսկ «մօտաւորապէս հաշուարկել է» հնարաւոր կեղծիքների ծաւալները եւ հնարաւորութիւն տուել, որ նախապէս ուրուագծուեն նկատուելիք թիւերը: Այլ հարց է, որ այս անգամ իշխանութիւններին այդ թիւերը հազիւ թէ պէտք գան: Երեւանում, ամէն դէպքում, այնքան էլ հեշտ չէ զանգուածային ընտրակեղծիքներ իրականացնելը:*

***ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ***
***«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»***

# ՃԳՆԱԺԱՄԸ ՉԻ ԱԶԴԵԼ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆԻ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

*Թէ ՀՀԿ-ի եւ թէ ԲՀԿ-ի կազմակերպած քարոզարշաւները ցոյց են տալիս, որ այս երկու կուսակցութիւնները ջանք ու եռանդ, ինչպէս նաեւ գումարներ չեն խնայում յանուն ընտրութեան, յանուն ժողովրդի քուէների:*

*Կազմակերպւում են համերգներ, անվճար բուժում, վիրահատութիւն, բացի սրտի վիրահատութիւններից, եւ այլն: Ի դէպ, արդէն խօսակցութիւններ կան, որ ամենաշատը գրանցուել են քիթ-կոկորդ վիրահատութիւնները, ինչպէս նաեւ կոնսուլտացիաները: Ասում են՝ ԲՀԿ-ն այդ «բարի» աւանդոյթը շարունակելու է նաեւ Յունիս ամսին: Ինձ էլ են դիմել, թէ չունեմ արդեօք բարեկամ կամ ծանօթ, որ առողջական խնդիրներ ունենայ:*

*Ջէյթունաբնակ Հռիփսիմէն բոլորովին վերջերս է յայտնաբերել, որ իրեն ինչ որ մէկը դարձրել է ԲՀԿ անդամ, բայց դրանից վատ չի զգում, իր իսկ խօսքով՝ թեթեւ է տանում: Հիմա մի բան է ցանկանում իմանալ, թէ իրեն ինչ օգուտ այդտեղից: Օրինակ, հանրապետականը նախագահական ընտրութիւնների ժամանակ 8000 դրամ է տուել իր ձայնը ստանալու համար:*

*ԲՀԿ-ի նախընտրական շտաբից ճշդել է՝ արդեօ՞ք գումար կը տան իրեն, թէ ոչ, բայց յստակ պատասխան դեռ չեն տուել. «Ասում են՝ դեռ պարզ չէ, փողի շուխուր չկայ», նշեց մեզ հետ զրոյցում Հռիփսիմէն՝ աւելացնելով, որ ինքը գիտի՝ ով է անցնելու, կարեւորն այս պարագայում ակնկալուող գումարն է, որը դեռ չեն տալիս: Յետոյ յիշեց, որ նախորդ ընտրութիւններին ՀՀԿ-ն ընտրութեան առաւօտեան է գումարը տուել, ուստի այս անգամ էլ յոյսը չի կտրում, դեռ բաւական ժամանակ կայ ընտրութիւններին: Իսկ թէ ինչու է ՀՀԿ-ն այսպէս ասած ընտրութիւնների վերջին րոպէին բաժանել փողը՝ պարզ չէ: Միգուցէ շուտ կաշառելու դէպքում ժողովուրդը մոռանար՝ ում է ընտրելու:*

*Տիկին Լաուրային, թէեւ ՀՀԿ-ն անցեալ ընտրութիւններին գումար չի տուել, փոխարէնը մարել են գազի 30 հազար դրամ պարտքը: «Անցեալ անգամ ՀՀԿ-ն գազի 30 հազար դրամ պարտքս մուծեց, հիմա ձայն չի հանում», աւելացրեց տիկին Լաուրան, փոխարէնը նշեց, որ այս անգամ իր նկատմամբ աւելի շռայլ է գտնուել ԲՀԿ-ն. «15 ձայն հաւաքեցի, վճարեց 27.000 դրամ: Հիմնականում հարեւաններիս անունները գրեցի, ինչ վատ ա», ասաց Լաուրան: Ըստ նրա, ԲՀԿ-ն բարձր է վարձատրում իր այն աշխատողներին, ովքեր կուսակցութեան համար ապահովում են բնակչի անձնագրի տուեալները: Այս դէպքում 15 ձայնի դիմաց գումարը կազմում է 60 հազար դրամ:*

*Ըստ մեր տեղեկութիւնների՝ բաւական բարձր աշխատավարձ են ստանում ՀՀԿ նախընտրական շտաբների պետերը. մօտաւորապէս 1000 դոլար, սակայն մի քանի շտաբներում առհասարակ հերքեցին աշխատավարձով աշխատելը, բոլորը թէ՝ հասարակական հիմունքներով ենք աշխատում: ՀՀԿ մամուլի խօսնակ Էդուարդ Շարմազանովն էլ հերքեց՝ ասելով, որ դեռ չի հաստատուած հասանելիք բիւջէն. «Օրէնքով սահմանուած կարգով մենք կարող ենք մինչեւ 60 միլիոն դրամ ծախսել Երեւանի աւագանու ընտրութիւնների համար: Երբ ընտրութիւնն աւարտուի, մենք օրէնքով սահմանուած կարգով կը ներկայացնենք համապատասխան լիազօր մարմնին, որն էլ կարող է տրամադրել հաշուետուութիւնը լրատուամիջոցներին»:*

*Հարցին՝ նախընտրական շտաբներում բոլորը՝ թէ շտաբի պետը եւ թե աշխատողները հերքեցին աշխատավարձով աշխատելը, պատասխանեց. «Նախ ասեմ՝ մենք մեր կուսակիցներին չենք վարձատրում, որպէսզի նրանք աշխատեն: Կուսակցութիւնը ՍՊԸ չի, որպէսզի վարձատրուի, կուսակցութիւնը դա քաղաքական համախոհների կուռ բանակ է», ասաց Շարմազանովն՝ աւելացնելով, որ շտաբի պետն առաջին հերթին պատասխանատուութիւն է եւ ոչ թէ իրաւունք:*

*Ինչեւէ, ով ինչքան ձայն կը հաւաքի կ'իմանանք ընտրութիւններից ժամեր անց կամ գուցէ այդպէս էլ, ինչպէս միշտ ամէն ինչ վերջնականապէս չիմանանք, բայց մի բան այնուամենայնիւ լաւ է՝ մէկ ամսով կարելի է ժողովրդի զբաղուածութեան մասին չանհանգստանալ:*

*Ակնյայտ է՝ ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի վրայ ճգնաժամը բոլորովին չի ազդել, ընդհակառակը, նրանք կարծես աւելի շռայլ են դարձել:*

*Իսկ շտաբներում առանձնապէս բան չկայ անելու, եւ հիմա նրանց ամբողջ օրը պարապութիւնից նարդի ու թղթախաղ խաղալիս կարող ես տեսնել:*

***ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ***
***«ԼՐԱԳԻՐ»***

**www.massisweekly.com**

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ՀԱՅԱՍՏԱՆ

# «ՀԱԿ-Ը ԿԸ ՍՏԱՆԱՅ 50%-ԻՑ ԱՒԵԼԻ ՁԱՅՆԵՐ»




Ասուլիսի մը ընթացքին Աղասի Արշակեան (աջին) կը վիճի Ադիբեկեանի հետ (ձախին). կեդրոնը նստած է ասուլիս համադրողը

*«ԹԵՐԹ.AM»: Վերջին մի քանի տարուայ ընթացքում Երեւանի քաղաքապետարանից դժգոհ էին բնակչութեան 60%-ը: Այս մասին Մայիս 16-ին յայտարարել է «Սոցիոմետր» կենտրոնի տնօրէն Ահարոն Ադիբեկեանը: Սրան ի պատասխան, սոցիոլոգի ընդդիմախօս, ԱԺ նախկին պատգամաւոր, անհատ տնտեսագէտ-վիճակագրագէտ Աղասի Արշակեանն ասել է, որ «Օրինաց երկիր կուսակցութիւնը», «Բարգաւաճ Հայաստանը» եւ Տիգրան Կարապետեանը չեն համաձայնում Ձեր վերլուծութիւնների հետ»:*

*«Երբ ինձ քննադատում է Կարապետեանը, 6%-ը ծափահարում են, 96%-ը թքում են նրա երեսին»,- պատասխանել է Ադիբեկեանը:*

*Նախորդ շաբաթ Ահարոն Ադիբեկեանը ներկայացրել էր Երեւանի քաղաքապետի ընտրութիւնների վերաբերեալ կատարուած հարցման արդիւնքները: Հենց այդ ժամանակ էլ Աղասի Արշակեանը հանդէս է եկել «Նուիրւում է նահանգային սոցիոլոգներին» վերլուծական մեկնաբանութեամբ: Այսօր Արշակեանը նշել է, որ այս աշխատանքում ներկայացուած են ոչ թէ իր ցանկութիւնները, այլ այն իրավիճակը, որը նա տեսնում է որպէս տնտեսագէտ եւ վերլուծաբան: Նա նշել է, որ մինչեւ նախագահական ընտրութիւններն ինքը հնարաւորութիւն է ունեցել հանդէս գալ եւ ցոյց տալ բոլոր անհրաժեշտ գործողութիւնները, որոնք պէտք է ձեռնարկէին իշխանութիւնները եւ ընդդիմութիւնը, որպէսզի խուսափէին արիւնահեղութիւնից:*

*«Ցաւօք սրտի, ես նոյն ապրումներն ունեմ նաեւ առաջիկայ ընտրութիւնների հետ կապուած»,- նշել է նախկին պատգամաւորը: Նա նշել է, որ Երեւանի քաղաքապետի ընտրութիւնները կարելի է համեմատել «նախագահական ընտրութիւնների երեւանեան հատուածի ընտրութիւնների հետ»:*

*Նա նշել է նաեւ, որ 2008թ. նախագահական ընտրութիւններն աննախադէպ են եղել ինչպէս ընտրողների թուի տեսանկիւնից, այնպէս էլ ընտրակեղծիքների տեսանկիւնից:*

*Աղասի Արշակեանի կարծիքով՝ Հայ Ազգային Կոնգրեսի ձայները կ՚աւելանան այնպիսի կուսակցութիւնների շնորհիւ, ինչպիսին են Օրինաց երկիրը եւ Դաշնակցութիւնը, որոնք նախագահական ընտրութիւններին մասնակցել են ընդդիմութեան կարգավիճակում:*

*«Արդիւնքում ստացւում է, որ ՀԱԿ-ի թեկնածութիւնը կը ստանայ 50%-ից աւել ձայն, այսինքն այնքան, ինչքան մեր յարգարժան Ադիբեկեանը ցոյց է տալիս հանրապետականների համար», - ասել է Արշակեանը:*

# «ՆԱԻՐԻՏ»-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՂԵՏԻՑ ԶՈՀՈՒԵԼ Է ՉՈՐՍ ՄԱՐԴ



«Նաիրիտ» քիմիական գործարանէն ներս տեղի ունեցած հրդեհի պահուն

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Երեւանի «Նաիրիտ» քիմիական գործարանի քլորոպրենի արտադրամասում Մայիս 14-ին տեղի ունեցած աղետից զոհուել է չորս մարդ: «Յայտնաբերուեց չորրորդ դիակը, եւ, փաստօրէն, որոնողական աշխատանքները սրանով աւարտուեցին, որովհետեւ այդ արտադրամասում վթարի պահին եղել էին չորս հոգի», - «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց Արտակարգ իրավիճակների նախարարութեան Փրկարար ծառայութեան տնօրէնի խորհրդական Նիկոլայ Գրիգորեանը:*

*«Ամբողջ գիշեր դէպքի վայրում հերթապահում էին «Նաիրիտ»-ի հրշէջներն ու մեր 8-րդ հրշէջ մասի, ինչպէս նաեւ Արագ արձագանքման փրկարար ջոկատի մարտիկները: Կրակը հանգցուած է, բոլոր հետեւանքները վերացուած են, յայտնաբերուած են բոլոր զոհուածները», - ասաց Գրիգորեանը:*

*Էկոլոգիական վիճակին վերաբերող հարցին Նիկոլայ Գրիգորեանը արձագանքեց. - «Արտանետուած նիւթերի բաղադրութեան եւ այլնի մասին կը ներկայացնեն մասնագէտները»:*

*«Նաիրիտ» փակ բաժնետիրական ընկերութեան մամուլի ծառայութեան ղեկավար Անուշ Յարութիւնեանը յաջորդ օրը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում վերահաստատեց, որ երէկ գործարանի քլորոպրենի արտադրամասում տեղի ունեցած պայթիւնից առաջացած հրդեհի պատճառով զոհուել է «Նաիրիտ»-ի չորս աշխատակից, տուժածները եւ վիրաւորները ութն են, նրանցից չորսը՝ հրշէջ ծառայութեան աշխատակիցներ:*

*«Նաիրիտ»-ի տնօրինութեան խնդիրը այս պահին զոհերի եւ տուժածների ընտանիքներին հնարաւոր օգնութիւն եւ աջակցութիւն ցոյց տալն է, կազմակերպելն է», - ասաց Յարութիւնեանը:*

*Կարծիք կայ, որ «Նաիրիտ»-ի որոշ արտադրամասերում խողովակները հնամաշ են եւ շահագործման համար ոչ պիտանի. հնարաւո՞ր է, որ դա լինի պայթիւնի պատճառը, - այս հարցին Անուշ Յարութիւնեանը արձագանքեց. - «Այս պահին ոչինչ պնդել չեմ կարող, բայց եթէ այդ տեխնոլոգիաները այնպիսի վիճակում էին, որ չէր կարելի գործարկել, այդքան հին էին ու ժանգոտած՝ ինհարկէ, մերոնք չէին գործարկի: Բայց ամէն ինչ հնարաւոր է. Այս պահին ես այդպիսի պնդում անել կամ ժխտել չեմ կարող»:*

# «ԹՈՒՐՔԵՐԸ ԿԸ ԳՆԵՆ ՀԱՅԵՐԻ ՏՆԵՐԸ»



Սփիւռքահայ գործարար Վահագն Յովնանեան

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Յայտնի սփիւռքահայ բարերար, գործարար Վահագն Յովնանեանը մտավախութիւն ունի, որ հայ-թուրքական սահմանի բացումից յետոյ հայերը կը սկսեն տներն ու հողը վաճառել թուրքերին:*

*«Ես չգիտեմ այդ կոնտրոլը ինչպէս պէտք է պահուի. Եթէ մի քանի դրամ, դոլար աւելի տան, հայերը պիտի արագ կերպով ծախեն իրենց տուները: Հազիւ մեր հողերը հետ բերեցինք ադրբեջանցիներէն, չըլլայ՝ նորէն հետ դառնան հողերը ուրիշներու: Ասիկա է իմ մեծ մտավախութիւնը»,-ասաց նա:*

*Վահագն Յովնանեանը յիշեցրեց, որ «քարտէզի վրայ մենք իրենց դիմաց մի փոքր կէտ ենք» եւ աւելացրեց, որ թէեւ մեր սահմանին մօտ իրենք շատ հող ունեն, բայց մեր հողերն իրենց աւելի հրապուրիչ են, որովհետեւ իրենց՛ թուրքերի հողերի վրայ քուրդերը կ՚ապրեն»:*

*Յովնանեանի մտահոգութիւնը կարող է փարատուել օրէնսդրական լուրջ փոփոխութիւններից յետոյ միայն: Այլապէս, եթէ ամերիկացուն, չինացուն, սփիւռքահային կարելի է վաճառել, իսկ ինչու թուրքին չպէտք է վաճառեն տունը. այս օբիեկտիւ հարցադրումը կարող է առաջանալ ամէն պահ:*

*Յովնանեանը կողմ է հայ-թուրքական սահմանի բացմանը, բայց առանց նախապայմանների. Բայց յիշեցրեց, որ վերջերս Թուրքիան սկսել է նախապայմաններ առաջ քաշել, այնինչ նախապայման դնելու լրիւ իրաւունքն ունէր Հայաստանը: Յովնանեանն այստեղ էլ ունի մտավախութիւն, որ թուրքական շուկայի ճնշմանը հայկական տնտեսութիւնը չի կարողանայ դիմակայել:*

# ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԴԷՊՆ Է ԳՐԱՆՑՈՒԵԼ ՀՀԿ-Ի ԵՒ ԲՀԿ-Ի ՄԻՋԵՒ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Մայիս 18-ին Երեւանի 3-րդ գիւղ կոչուող թաղամասում «Ա1+»-ի ունեցած չճշդուած տեղեկութիւններով ՀՀԿ-ական մի խումբ երիտասարդներ «նեղացրել են» բարգաւաճականներին, որոնք նախընտրական բուկլետներ, թռուցիկներ են բաժանելիս եղել:*

*Այս միջադէպից յետոյ ԲՀԿ-ի համեմատած աւագ ներկայացուցիչները փորձել են հարցերը պարզել ՀՀԿ-ի շտաբում:*

*Նրանց մէջ, մեր ունեցած տեղեկութիւններով, եղել է նաեւ «Ռոյալ» հիւրանոցի բարգաւաճական սեփականատէրը:*

*Դրանից յետոյ գործին խառնուել է Աջափնեակ համայնքի թաղապետ Ռուբէն Յովսէփեանը՝ իր շքախմբով:*

*Սակայն այստեղ էլ մեծ բախում է արձանագրուել, որից մեր ունեցած, սակայն չճշդուած տեղեկութիւններով, ուղղակի թաղապետին փախցրել են դէպքի վայրից: Տուժածների մասին տեղեկութիւններ չունենք, թէեւ կրկին չճշդուած լուրերով, միջադէպը արիւնոտ է եղել եւ կան առնուազն վիրաւորներ:*

*Պաշտօնապէս ոչինչ հնարաւոր չեղաւ պարզել ոչ ՀՀԿ-ի, ոչ ԲՀԿ-ի պատասխանատուներից, կամ մամլոյ ծառայութիւններից, չեն պատասխանում նաեւ իրաւապահները: Փաստը կարող են ապացուցել մեր տրամադրութեան տակ գտնուող մի քանի լուսանկարները, որոնք վկայում են դէպքի վայրում ոստիկանների ներկայութեան մասին:*

*Ի դէպ, մեր ունեցած լուրերով, կան նաեւ ձերբակալուածներ:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

## ԼՈՒՐԵՐ

# ՓԻԹԵՐ ՍԵՄՆԵԲԻՆ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԸՆԴԴԻՄՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Հարաւային Կովկասում Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմնեբին անցած շաբաթավերջին Երեւանում հանդիպել է Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) ներկայացուցիչների հետ: Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց ՀԱԿ-ի արտաքին կապերի պատասխանատու Վլադիմիր Կարապետեանը, հանդիպման ժամանակ Սեմնեբին երկու անգամ շեշտել է, որ Հայաստանի իշխանութիւնների հետ քննարկել է նաեւ երկրի ներքաղաքական իրավիճակը:*

*Պաշտօնական հաղորդագրութիւնների համաձայն, նախագահ Սերժ Սարգսեանի, արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի, խորհրդարանի նախագահ Հովիկ Աբրահամեանի հետ Եւրամիութեան յատուկ ներկայացուցչի հանդիպումներում առաւելապէս քննարկուել են արտաքին քաղաքական հարցերն ու Եւրամիութեան Արեւելեան գործընկերութեան ծրագիրը:*

*Այդուհանդերձ, Փիթեր Սեմնեբին հետաքրքրել էր նաեւ ընդդիմութեան Մայիսի 15-ի հանրահաւաքը. նա Մատենադարան էր եկել եւ ներքեւից մի պահ հետեւում էր իրադարձութիւններին: ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումը, ըստ Վլադիմիր Կարապետեանի, յաջորդել է հանրահաւաքին:*

# ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒԿԸ ԿՐԿԻՆ ԿԱՐՈՂ Է ԿԱՆԳՆԵԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՒ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Չի բացառւում, որ աշխարհահռչակ թուրք գրող Օրհան Փամուկը շուտով կրկին կանգնի դատարանի առջեւ: Պատճառը՝ 1915 թուականի իրադարձութիւնների վերաբերեալ գրողի յայտնի յայտարարութիւններն են:*



**Թուրք գրող Օրհան Փամուկ**

*Անցած շաբաթավերջին Թուրքիայի Վճռաբեկ դատարանը բաւարարել է Ստամբուլում գործող հասարակական կազմակերպութիւններից մէկի հայցը՝ չեղեալ յայտարարելով 2006 թուականին առաջին ատեանի դատարանի կայացրած վճիռը, որով Փամուկի դէմ Քրէական օրէնսգրքի տխրահռչակ 301 յօդուածով յարուցուած քրէական գործը կարճուել էր:*

*2005 թուականին շուէյցարական «Տագէս Անցայգեր» պարբերականին տուած հարցազրոյցում Փամուկն ասել էր. - «Մէկ միլիոն հայ եւ 30 հազար քուրդ է սպանուել Թուրքիայում, բայց որեւէ մէկը չի համարձակւում այդ մասին խօսել»:*

*Սրան ի պատասխան՝ թուրք ազգայնական իրաւաբանների մի խումբ դիմել էր դատախազութեանը՝ Փամուկին մեղադրելով թուրքական ինքնութիւնը վիրաւորելու մէջ: Փամուկի դէմ յարուցուած դատական պրոցէսը խիստ քաղաքականացուած էր, դատական նիստերը ուղեկցւում էին ազգայնականների կազմակերպած ցոյցերով:*

*Չնայած այս ճնշմանը՝ դատարանը կարճեց Փամուկի դէմ յարուցուած գործը: Շատերի կարծիքով՝ դատաւորները այս քայլին գնացին, նախեւառաջ, տեղի տալով Արեւմուտքից հնչող կոշտ*

# «ԵՒՐԱՏԵՍԻԼ 2009» ԵՐԳԻ ՄՐՑՈՅԹՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ 10-ՐԴ ՏԵՂԸ



**Հայաստանի ներկայացուցիչներ Ինգա եւ Անուշ Արշակեանները «Եւրատեսիլ 2009» երգի մրցոյթի ժամանակ**

*«Եւրատեսիլ 2009» երգի մրցոյթում Հայաստանի ներկայացուցիչներ Ինգա եւ Անուշ Արշակեանները զբաղեցրին միայն 10-րդ հորիզոնականը: Այնինչ մեր հարեւաններ Ատրպէյճանն ու Թուրքիան զբաղեցրին համապատասխանաբար 3-րդ եւ 4-րդ հորիզոնականները: Այս տարի մրցոյթի սկանդալային պատմութիւններից էր նաեւ մեր ներկայացուցիչների տեսահոլովակից ԼՂՀ սիմվոլի հանելու պատմութիւնը:*

*Յիշեցնենք, որ ադրբեջանական իշխանութիւնները վերջնագրի տեսքով պահանջ էին ներկայացրել հանել Ինգա եւ Անուշի տեսահոլովակից Սարգիս Բաղդասարեանի «Մենք-մեր սարերը» քանդակի նկարը: Սակայն Հայաստանի ձայները ներկայացնող Սիրուշոն ուղիղ եթերի ժամանակ ձեռքին բռնել էր քանդակի նկարը:*

*Ռուսաստանի հայերի միութիւնը այս մասին յայտարարութիւն էր արել.«Սա ադրբեջանական իշխանութիւնների հերթական քայլն է հակամարտութեան սրացմանն ուղղուած, ինչը առթիւ մեր ափսոսանքն ենք յայտնում»:*

# ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԵԼ Է ԱՄՆ-Ի ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱԶԱՐԷԹ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ԴԻԱԿԸ



**Սպանուած Ամերիկահայ գործարար Նազարէթ-Յակոբ Պէրպէրեան**

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Անցած շաբաթավերջին Երեւան - Սեւան մայրուղու 25,5 կիլոմետր հատուածում, ճամփեզրի ձորակում յայտնաբերուել է Միացեալ Նահանգների քաղաքացի, «ԼԻԼՆԱՐ» ընկերութեան տնօրէն Նազարէթ-Յակոբ Պէրպէրեանի դիակը՝ բռնութեան հետքերով:*

*Հայաստանի ոստիկանութեան օպերատիւ ամփոփագրի համաձայն, դիակը յայտնաբերուել է Մայիսի 15-ին՝ Ոստիկանութեան եւ Ազգային Անվտանգութեան Ծառայութեան համապատասխան ստորաբաժանումների ձեռնարկած համատեղ միջոցառումների շնորհիւ:*

*Պէրպէրեանը Ապրիլի 28-ից որոնւում էր ոստիկանութեան կենտրոնականի բաժնի կողմից՝ որպէս անհետ կորած: Նրա աւտոմեքենան յայտնաբերուել էր «Զուարթնոց» օդանաւակայանի աւտոկանգառում:*

*Դէպքի առթիւ Մայիսի 5-ին յարուցուել էր քրէական գործ Քրէական օրէնսգրքի 104 յօդուածի առաջին մասի յատկանիշներով՝ «սպանութիւն»:*

*Քննութիւնը վարում է Երեւանի քննչական վարչութիւնը:*

*«Նախաքննութեան շահերից ելնելով՝ դէպքի հանգամանքները եւ յանցագործութիւն կատարածների անունները չեն հրապարակւում», - ասուած է ոստիկանութեան օպերատիւ ամփոփագրում:*

# ՄԱՀԱՑԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ ՍԵՒԴԱ ՍԵՒԱՆԸ



**Գրող եւ դիւանագէտ Սեւդա Սեւան**

*Կիրակի՝ Մայիսի 17-ին մահացել է Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Սեւդա Սեւանը: Այս մասին տեղեկացրել է Հայաստանի արտգործնախարարութեան մամուլի ծառայութիւնը:*

*Սեւդա Սեւանը ծնուել է 1945 թուականի Նոյեմբերի 6-ին, պատմական գիտութիւնների թեկնածու է, 1993 թուականին նշանակուել է Բուլղարիայում Հայաստանի պատուաւոր հիւպատոս: 1999-ից 2005 թուականներին եղել է Բուլղարիայում Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան:*

# ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱՐՇԱՒԸ

**Շարունակուած էջ 1-էն**

*ժողովուրդ, որոնք վերջաւորութեան երթ կազմակերպած են համայնքի փողոցներով:*

*Մայիս 15-ին տեղի ունեցաւ նաեւ Հայ Ազգային Գոնկրէսի կեդրոնական հանրահաւաքը: Մատենադարանի մօտ համախմբուած էին տասնեակ հազարաւոր ժողովուրդ, որոնց ներկայութեան Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան յայտարարեց, որ Սերժ Սարգսեանի վերջին կարուկ քայլերը ջղաձգութիւններու արդիւնք են: Քննադատելով իշխանութիւններու արտաքին քաղաքականութիւնը Լեւոն Տէր-Պետրոսեան զայն որակեց «դիւանագիտական պարտութիւններու մի անընդհատ շղթայ»:*

*«Սերժ Սարգսեանի, այս կտրուկ քայլերը, որոնք ոչ այնքան ճշգրիտ հաշուարկների վրայ հիմնուած գործողութիւններ, որքան ջղաձգութիւններ են յիշեցնում կամ քաղաքական դեմարշի տպաւորութիւն թողնում», - յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեան ու աւելցուց. - «Սարգսեանը իրեն խաբուած է զգում երեխայի պէս: Նրան ասացին՝ ցեղասպանութիւնը տուր, այսինքն՝ համաձայնիր հայ եւ թուրք պատմաբանների յանձնաժողովի ստեղծմանը, եւ մենք կը բացենք սահմանը: Ցեղասպանութիւնը ստացան՝ բայց սահմանը չբացեցին: Իսկ այժմ ասում են՝ Ղարաբաղը տուր եւ մենք կը բացենք սահմանը»:*

*«Քոչարեանա-սերժական վարչախմբի արտաքին քաղաքականութիւնը դիւանագիտական պարտութիւնների մի անընդհատ շղթայ է ներկայացնում, եւ բոլոր այդ պարտութիւնները բացատրւում են միայն ու միայն Հայաստանի ներքին կեանքում այդ վարչախմբի վարած բռնատիրական քաղաքականութեամբ», - յայտարարեց Լեւոն Տէր-Պետրոսեանը:*

*Հայաստանի առաջին նախագահի կարծիքով, Արեւմուտքի եւ Թուրքիոյ հակազդեցութիւնը, մտահոգուելու եւ իրավիճակէն համապատասխան ելք գտնելու պահանջ կը դնէ Հայաստանի իշխանութիւններու եւ ողջ հասարակութեան առջեւ: Տէր-Պետրոսեանը յայտարարեց, որ փակուղիէն դուրս գալու համար Սերժ Սարգսեան պէտք է ազատ արձակէ քաղաքական բանտարկեալներուն եւ երկխօսութիւն սկսի Հայ Ազգային Գոնկրէսի ու ընդդիմութեան միւս ուժերուն հետ:*

*Ընդդիմութեան հանրահաւաքը աւարտեցաւ երթով՝ Երեւանի կենտրոնական փողոցներով:*

## ԼԻԲԱՆԱՆ

# ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՔԸ ՊԷՅՐՈՒԹԻ ՀԱՃԸՆ ԹԱՂԷՆ ՆԵՐՍ



*Տեսարան մը ընտրական հաւաքի մասնակիցներէն*




*Հնչակեան Կուսակցութեան զօրակցութիւնը վայելող թեկնածուները կ'ողջունեն ժողովուրդին*

*Լիբանանի խորհրդարանական ընտրութիւններէն քանի օրեր առաջ: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, շնորհիւ լիբանանեան քաղաքական կեանքէն ներս յանուն երկրին ամբողջականութեան, անկախութեան եւ գերիշխանութեան պայքարին մէջ ունեցած դերակատարութեան, վայելած վարկին ու հեղինակութեան, անգամ մը եւս լիբանանեան խորհրդարանէն ներս պիտի ունենայ իր սեփական ներկայացուցիչը, յանձինս՝ ընկեր Սեպուհ Գալփաքեանին: Այն վստահութիւնը , որ Հնչակեան կուսակցութիւնը կը վայելէ լիբանանեան քաղաքական բեմին վրայ կու գայ հինէն, շատ հինէն՝ Լիբանանի մէջ կուսակցութեան առաջին քայլերէն, այն հեռաւոր օրերէն, երբ մեր հաւատաւոր ընկերներէն շատ շատեր, յաճախ կեանքի գնով պայքարեցան յանուն Լիբանանի անկախութեան, անոր արաբական դիմագիծին պաշտպանութեան, յանուն անոր քաղաքական ու ազգային անկախութեան: Կուսակցութեան արձանագրած յաղթանակը պարզապէս խթան մըն էր՝ ազատ, գերիշխան ու ժողովրդավարական հայրենիքի մը կայացման համար կուսակցութեան արեւելումը աւելի վճռակամ շարունակելու:*

*Ճիշդ այս նպատակաւ, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը Շաբաթ, 16 Մայիս 2009-ի երեկոյեան, Հաճըն Թաղի հին Սահակեան վարժարանի բացօթեայ տարածութեան վրայ կազմակերպեց հրապարակային ընտրական հաւաք մը:*

*Հանրահաւաքին ներկայ գտնուեցան պետական նախարար Ժան Օղասապեան, պետական երեսփոխաններ Մեթր Սերժ Թուրսարգիսեան, Ընկ. տոքթ. Եղիկ Ճէրէճեան, Յակոբ Գասարճեան եւ լիբանանեան խորհրդարանի նորընտիր անդամ Ընկեր Սեպուհ Գալփաքեան, Պէյրութի երկրորդ ընտրաշրջանի Սիւննի համայնքին պատկան աթոռին Մուսթաքպալ Հոսանքի թեկնածու Նուհատ Մաշնուք, պետական անձնաւորութիւններ, Մարտ 14-ի Ուժերու պատկան կուսակցութիւններու ներկայացուցիչներ, Ռամկավար Ազատական կուսակցութեան պատուիրակութիւն մը, Ազատ Լիբանանահայերու շարժումի պատուիրակութիւն մը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը իր ատենապետին Ընկեր տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի գլխաւորութեամբ, հայ կուսակցական, մարզական, մշակութային, բարեսիրական միութեանց, ինչպէս նաեւ մամուլի ներկայացուցիչներ:*

*Հ.Մ.Մ.ի փողերախումբին կատարողութեամբ ներկաները յոտնկայս լսեցին Լիբանանի եւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան քայլերգները: Յանուն Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի Ընկ. Ալեքսան Քէօշկէրեան, բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս յարգել Մարտ 14-ի քաղաքական եւ գաղափարական ուղեգիծին համար նահատակուած գործիչներուն յիշատակը: Ապա ան հայերէն եւ արաբերէն լեզուներով ներկաներուն բացատրեց սոյն հանրահաւաքին խորհուրդը: Ան ըսաւ. «Սիրելի հայրենակիցներ, բարեկամներ եւ ընկերներ. Այս ընտրութիւններուն մեր ընտրանքները եւ դիրքորոշումն երբ կը բխին Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան գաղափարական ակունքներէն՝ Հնչակեան կուսակցութիւնը կը հաւատայ եւ կը ձգտի կայուն, ամուր եւ արդար պետականութեան կայացման: Մենք կը հաւատանք, որ միայն արդար պետութիւնը երաշխիք է իր բոլոր քաղաքացիներուն բարօրութեան եւ բարեկեցութեան:*

*Ապա ան բեմ հրաւիրեց Պէյրութի Առաջին ընտրաշրջանի Հայ Առաքելական համայնքին պատկան աթոռին թեկնածու Ժան Օղասապեանը: Յարգելի նախարարը դրուատեց Հնչակեան Կուսակցութեան խիզախ կեցուածքները Լիբանանի պատմութեան, ինչպէս նաեւ Հայ Ազգային Ազատագրական պայքարի ընթացքին: Ան ըսաւ, որ խորհրդարանի ընտրութիւնն երբ պիտի ըլլան ճակատագրական համայն Լիբանանի համար: Պարոն նախարարը մերժեց պետական զէնքէն բացի ապօրինի զէնքի գոյութիւնը եւ դիտել տուաւ որ յառաջիկայ ընտրութիւնը ընտրանք մը պիտի ըլլայ պետութեան եւ փոքր անիշխան պետութիւններու միջեւ:*

*Մենք այսօր բոլորս կը գտնուինք Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կազ-*

*Շար.ը էջ 16*

## ՍԴՀԿ-Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՄԻՆ ՃԵՄԱՅԵԼԻՆ



*Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը ատենապետ Ընկ. Տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի գլխաւորութեամբ եւ նորընտիր երեսփոխան Ընկ. Սեպուհ Գալփաքեանի ընկերակցութեամբ այցելեցին Պիքֆայա, Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Ամին Ճեմայէլին: Հանդիպումը առիթ մը եղաւ քննարկելու ներլիբանանեան բեմին վերջին զարգացումները, ինչպէս նաեւ խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններու ընթացքը, յատկապէս Պէյրութի, Մեթնի եւ Ջահլէի ընտրաշրջաններուն մէջ:*

*Հանդիպումին նաեւ մասնակցեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Վարիչ Մարմնոյ անդամ Տոքթ. Սարգիս Պետիկեանը, Մեթնի շրջանի մարոնի աթոռին թեկնածու Սամի Ճեմայէլը, Փաղանգաւոր կուսակցութեան քաղաքական դիւանի անդամ Ալպեռ Կոստանեանը եւ Մեթնի շրջանի պատասխանատու Հաննա Ալղուլը:*

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ՍՈՒՐԻԱ - ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏ ԿԸ ՀԱՍՏԱՏԷ

*Սուրիոյ Հանրապետութեան նախագահ՝ Պաշշար Ասատ, Թուրքիոյ նախագահ Ապտալլա Կիւլի անցեալ շաբաթավերջին Սուրիա կատարած այցելութեան առթիւ հանդիպում մը ունեցաւ թրքական «Սապահ», «Ջաման» եւ «Հիւրիէթ» թերթերու թղթակիցներուն հետ: Այս առթիւ ան անգամ մը եւս հաստատեց այն լուրը թէ Իսրայէլի հետ տեղի ունեցող անուղղակի բանակցութիւններու ընթացքին Սուրիա չի կրնար սեղանի շուրջ նստիլ առանց Թուրքիոյ մասնակցութեան:*

### ԻՐԱՔ - ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Իրաքի իշխանութիւնները յայտարարեցին թէ երեսփոխանական նորը ընտրութեանց թուականը որոշուած է 2010 թուականի Յունուար 30ին: Ասիկա իր տեսակին մէջ երկրորդ ընտրութիւնն է, Սատտամ Հիւսէյնի վարչակարգի տապալումէն ետք:*

### ԵԳԻՊՏՈՍ - ՆԱԽԱԳԱՀԻՆ ԹՈՌՆԻԿԸ ՄԱՀԱՑԱԾ

*Գահիրէ. Եգիպտոսի հանրապետութեան նախագահ Հոսնի Մօպարաքի մեծ թոռնիկը 12 տարեկան Մուհամմէտ Ալաան, մահացաւ Երկուշաբթի երեկոյեան, առողջական յանկարծակի տագնապի մը հետեւանքով: Թաղումը տեղի ունեցաւ Երեքշաբթի, օր, Գահիրէի մէջ:*

*Նշենք նաեւ որ Եգիպտոսի այժմու նախագահը աւելի քան քառորդ դարէ ի վեր կը ղեկավարէ երկիրը: Իրմէ առաջ, 19րդ դարուն Մուհամմատ Ալի Փաշան եղած է երկրի միահեծան երկարատեւ թագաւորը:*

*Մօպարաք 2005 թուականին 5րդ անգամ ըլլալով վեց տարուան համար վերընտրուած էր Հանրապետութեան նախագահ: Քաղաքական մեկնաբանները կ'ենթադրեն որ Մօպարաք ընտանիքը սկսած է նախապատրաստական աշխատանքներ տանիլ Մօպարաքի կրտսեր զաւկին 44 ամեայ Կամալին համար, որպէս այժմու նախագահին յաջորդը: Կամալ՝ ամուսնացած է բայց զաւակ չունի:*

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

# « ԻՆՉՊԷՍ Ն ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ, ԱՅՆՊԷՍ ԷԼ ԱՅՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԴԷՆ ԻՍԿ ՆԿԱՏԵԼԻ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԻՐՏ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

## Հարցազրոյց ՍԴՀԿ Ատենապետ Լուտմիլա Սարգսեանի Հետ

Երեւանի աւագանու ընտրութիւններում Հայ Ազգային Գոնկրէսի՝ Նոր Նորք համայնքի նախընտրական շտաբների գործունէութեան վերահսկողութիւնը վերապահուած է Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեանը՝ ի դէմս Նոր Նորքի շտապի պետ, Ս.Դ.Հ.Կ. վարչութեան անդամ Գուրգէն Եղիազարեանի: Մեր զրուցակիցը Ս.Դ.Հ.Կ. ատենապետ Լուտմիլա Սարգսեանն է:

*- Պիտի արձանագրեմ, որ նախագահական ընտրութիւններից առաջ այս համայնքում շատ լուրջ թիմ չէր ձեւաւորուել, այդ պատճառով էլ աշխատանքները այնքան կորդինացուած եւ լաւ արդիւնք չտուեցին, ինչքան որ ակնկալւում էր: Մինչդեռ այսօրուայ դրութեամբ Նոր Նորքում շատ լուրջ թիմ է ձեւաւորուել. Նորքի բոլոր զանգուածներում ՀԱԿ-ն ունի շտաբներ, որտեղ տիրում է նախընտրական ակտիւ եռուզեռ, ամբողջ օրը մարդիկ ակտիւ ելումուտ են անում մեր գրասենեակներ, ընդ որում՝ ոչ միայն ՀԱԿ-ին անդամագրուածները, այլեւ շարքային քաղաքացիներ, որոնք խիստ դժգոհ են երկրիս կառավարիչների անօրինական գործունէութիւնից, ովքեր ակնկալում են իրենց քաղաքում փոփոխութիւններ արձանագրել ընտրութիւնների միջոցով ու այդ հարցում անվերապահ վստահում են ՀԱԿ-ին: Ինձ շատ գոհացնում է նախընտրական այն իրավիճակը, որն առկայ է Նոր Նորքում, սակայն մենք քաղաքացիների նախընտրական ոգեւորութիւնը էլ աւելի բարձր աստիճանի հասցնելու կարիք ունենք, որի դէպքում այդ համայնքում ՀԱԿ-ը բաւական բարձր ցուցանիշ ապահովելու մեծ շանսեր ունի:*

- Իսկ ինչպիսի՞ն է, Ձեր գնահատմամբ, ՀԱԿի քարոզարշաւի ընթացքը: Տպաւորութիւն է, թէ ընտրարշաւը սպասուածից պասիւ է:

*= Այն վախի մթնոլորտը, որը փորձում են ձեւաւորել իշխանութիւնները տարբեր մեթոդներով, բնականաբար որոշակի ազդեցութիւն թողնում է քաղաքացիների ակտիւութեան վրայ:*

*Մենք Նորք-Մարաշում ականատես եղանք, թէ ինչ լուրջ աշխատանք էին տարել իշխանութիւնները, որպէսզի հնարաւորինս քիչ մարդիկ ներկայանան նախընտրական հանդիպմանը, եւ ստեղծուի մի վիճակ, թէ իբր մենք այդ համայնքում չունենք համակիրներ: Իրականում, սակայն, մարդիկ, որոնց վրայ իշխանական տեռորը բացարձակ չի ազդում, եկել էին հանդիպման, եւ մենք գիտենք, որ Երեւանի բոլոր համայնքներում, այդ թւում եւ Նորք-Մարաշում, մենք բազմաթիւ համակիրներ ունենք: Դա անվիճելի է եւ իշխանական ռեպրեսիաները դրա դէմ ոչ մի բան անել չեն կարող: Ինչ վերաբերում է քարոզարշաւի ընդհանուր ընթացքին, ապա այն բազմամարդութեան, խանդավառուածութեան, ոգեւորութեան առումով աճողական է: Դաւիթաշէնում տեղի ունեցած նախընտրական հանդիպման փաստն արդէն իսկ յուշում է, որ օր օրի ակտիւանում է երեւանցին եւ մինչեւ Մայիսի 31-ը ՀԱԿ-ն իր ընտրարշաւի միջոցով կարողանալու է հասնել ընտրողների մաքսիմալ ակտիւութեան: Ես այն համոզումն ունեմ, որ ՀԱԿ-ի ընտրութիւնների մասնակցութեան փաստը գրեթէ անհնար է դարձնում միւս քաղաքական ուժերի յաղթելու հնարաւորութիւնները: Եթէ ի հարկէ, ընտրութիւններն անցնեն արդար ու թափանցիկ, ոչ թէ բացայայտ տեռորի ու տոտալ կեղծիքների պայմաններում, ինչպէս նախորդ՝ նախագահական ընտրութիւնների դէպքում էր: Իսկ եթէ գործի նոյն ձեռագիրը, մենք եւս պատրաստ ենք ամէն ինչ անել՝ մեր քուէները պահպանելու համար:*

- Մասնաւորապէս ի՞նչ մեթոդներ էք գործի դնելու, ի՞նչ գործողութիւնների միջոցով էք տէր կանգնելու ձեր ձայներին:

*= Համագործակցութիւն ընտրութիւնների ընթացքը վերահսկող, դիտարկող կազմակերպութիւնների հետ, ընտրակեղծիքների օպերատիւ արձանագրում, նաեւ՝ ըստ իրավիճակի կը դիմենք կոնկրետ գործողութիւնների:*

- Ինչպէս նախորդ նախագահական, այնպէս էլ այս ընտրութիւնների ժամանակ արդէն իսկ նկատելի են իշխանութիւններիբիրտ միջամտութիւնները նախընտրական պրոցեսին՝ ծեծւում եւ այլ բռնութիւնների են ենթարկւում ընդդիմութեան ակտիւիստները: Ի՞նչ երաշխիք, որ բուն ընտրական պրոցեսի ժամանակ էլ նոյն ձեռագիրը չի գործելու, եւ իշխանութիւններն էլի բռունցքի ուժով յաղթելու են:




Ս.Դ.Հ.Կ. ատենապետ Լուտմիլա Սարգսեան

*= Այդ բռնութիւնները խօսում են մի բանի մասին՝ իշխանութիւնները վստահ չեն իրենց յաղթանակի վրայ, ուստի եւ կիրառում են բոլոր հնարաւոր մեթոտները՝ ոստիկանական մահակ, բռունցք, որպէսզի պասիւ մասնակցութիւն լինի ընտրութիւններին, որովհետեւ պասիւ մասնակցութեան դէպքում աւելի է մեծանում ընտրակեղծիքներ իրականացնելու հնարաւորութիւնը: Իսկ մենք խնդիր ունենք ամէն գնով ակտիւացնել ու հասկացնել երեւանցի ընտրողին, որ միայն իր ակտիւութեամբ է հնարաւոր լինելու բռնել ընտրակեղծիք իրականացնողների ձեռքն ու թոյլ չտալ վերջինիս խլրացնել իշխանութեան հերթական օղակը:*

- Մայիսի 15-ին սպասուող համապետական հանրահաւաքի թեման ո՞րն է լինելու: Հնարաւո՞ր է, որ այդ

*Շար.ը էջ 18*



# ՀԱՅ ԴՊՐՈՑ

## ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԻՐ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Կիրակի 3 Մայիս 2009-ին, երեկոյան ժամը 6-ին, գոհունակութեամբ ներկայ գտնուեցանք Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի 29_րդ տարեդարձի ճաշկերոյթ տօնախմբութեան, որ տեղի ունեցաւ Արարատ Տան Տէօքմէճեան Հանդիսասրահին մէջ, Mission Hills:

Մեծ էր մեր ուրախութիւնը այս պատեհութեան համար: Ներկայ պիտի գտնուէինք ձեռնարկի մը, որ նուիրուած պիտի ըլլար հայ նոր սերունդներու հոգեմտաւոր դաստիարակութեան վրայ հիմնուած հայ դպրոցի մը 29-ամեակին: Գիտէինք հայ դպրոցներու դիմագրաւած դժուարութիւնները: Անոնց բոլորած կրթական մէն մի տարին՝ համազօր պիտի ըլլար հրաշքի: Իւրաքանչիւր ուսումնական տարի, իր մէջ պիտի ամփոփէր օրինաչափ՝ ինքզինք վերանորոգող յամառ զոհողութիւն, հետեւողական աշխատանք, պայծառ տեսլական, խորը հաւատք, անդուլ հաւաքական պայքար, առանց որոնց կարելի պիտի չըլլար գոյատեւել:

Այսօր պիտի փառաբանուէր հայ դպրոց մը, որ հայ հասարակութեան պիտի ներկայանար իր ձեռք բերած 25 տարուայ յաղթական կրթական վաստակով:

1980-ին, եկեղեցւոյ մը համեստ ստորայարկին հաստատուած 70 աշակերտներով սկսած անբարենպաստ պայմաններով այս դպրոցը, քանի մը տարի ետք, բարեբար նեցուկով, 1983-ին պիտի փոխադրուի Ալթատենայի իր սեփական հողաշերտը, պիտի մշակէր իր նորակառոյց դպրոցը, որ շուտով պիտի հաշուէր 392 աշակերտ:

Գեղեցկօրէն բարեզարդարուած «Տէօքմէճեան» հանդիսասրահը տօնական երեւոյթ: Հոն էին դպրոցով խանդավառ ծնողները, դպրոցի պատասխանատուները, բարերարները, ուսուցիչները եւ բարեկամները, հոծ բազմութեամբ:Անոնք եկած էին նիւթապէս եւ բարոյապէս թիկունք կանգնելու իրենց սիրելի Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանին, որուն արձանագրած կրթական յաջողութիւնները ակնբախ էին: Այս կապակցութեամբ, ներկաներուն իր բարիգալուստի խօսքին մէջ, Տիկ. Նունէ Սէփէթճեան իր շնորհակալութիւնները յայտնելէ ետք, դիտել տուաւ, թէ իրենց դպրոցը 29 տարի կրթական առաքելութեամբ ծառայած է մեր նոր սերունդներու հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեան, ծառայած է հայ մշակոյթին



Աշակերտական նուագախումբը կը նուագէ



Տնօրէն Պրն. Ճահէ Կարապետեան խօսքի պահուն

Շար.ը էջ 18

## ԵՌԵՌՆԻ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ա. ԵՒ Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

ԼԻԶԱ ՃԻԿԷՐԵԱՆ ՄԱՆՈՅԵԱՆ

Այս տարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ա. եւ Մ. Յովսէփեան Վարժարանի տնօրէնութիւնն ու հայկական բաժանմունքի ուսուցչուհիները, սովորութիւն դարձած Մոնթեպելլոյի Յուշարձան աշակերտական այցելութեան փոխարէն, ծրագրեցին Միշըն Հիլզի Արարատ Տունը այցելել Ապրիլ 23ին: Այս այցելութեան նպատակը մեր տարեց հայ մամիկներուն ու պապիկներուն հետ կէս օր մը անցընելն էր, զիրենք ուրախացնել եւ իրենց համար աշակերտներուն պատրաստած յայտագիրը ներկայացնելն էր, եւ ձեւով մը իրենց փոխանցել ու վստահեցնելն էր, որ մեր աւանդն ու պատկանելիութիւնը խորապէս արմատացած վստահեցնելն էր, որ մեր աւանդն ու պատկանելիութիւնը խորապէս արմատացած են իրենց յաջորդող սերունդին մօտ:

Ա. եւ Բ. կարգի աշակերտները Յ. Շիրազի «Մենք խաղաղ էինք» եռեակ ոտանաւորը արտասանեցին, Գ. կարգի աշակերտները՝ Ռ. Պատկանեանի «Կեանքից Թանկ Բանը» բեմականացուած ձեւով ներկայացուցին, իսկ Դ. կարգի աշակերտները Դ. Վարուժանի «Առկայծ ճրագը» արտասանեցին: Բ. կարգի աշաակերտ Նարեկ Տատուրեանը դաշնակի վրայ նուագեց «Նազելի»ն: Գ. եւ Դ. կարգի աշակերտները երգեցին «Հէյ Ջան Երեւան» եւ «Ազգ Փառապանծ» երգերը: Ապա, աշակերտները առիթը ունեցան ընկերային պահ ունենալու տարեցներուն հետ եւ միասին ճաշեցին իրենց ճաշասրահին մէջ: Այցելութեան վերջին վայրը եղաւ Արարատ-Էսքիճեան Թանգարանը: Թանգարանապետուհին իրենց համար պատրաստած էր հարցարան մը, որուն հարցումներուն պատասխանները գտնելով, շահեկան տեղեկութիւններ հաւաքեցին աշակերտները՝ հայկական մշակոյթը ներկայացնող թանգարանի նմուշներու կապակցութեամբ: Աշակերտները դպրոց վերադարձան շատ գոհունակ ու ուրախ, գիտակցելով որ կրցած էին այդ օրուան ընթացքին մեր հայ տարեցներուն իրենց առօրեայէն ու սովորականէն դուրս հաճելի պահեր տրամադրել:

Մինչ այդ, դպրոցէն ներս, Ե.-Ը. կարգի աշակերտները ունեցան երկու այցելուներ: Առաջինը՝ Պրն.



Աշակերտները սամուէլի պահուն



Վաչէ Մանկրեան

Շար.ը էջ 18


SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205



A.B.A. INSURANCE SERVICES

ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

# ԶԵՏԵՂՈՒՄ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԳԼԽԱՒՈՐ ԳՄԲԷԹԻ



Արեւմտեան Թեմի պատմութեան մէջ յիշատակելի պիտի մնայ Չորեքշաբթի, Մայիս 13, 2009 թուականը, երբ այդ օր կէսօրէ ետք ժամը 2:00ին պաշտօնապէս զետեղուեցաւ Առաջնորդանիստ Մայր Տաճարին Գլխաւոր Գմբէթը:

Այս ուրախ առիթով հրաւիրուած եւ ներկայ էր գլխաւոր գմբէթի բարերարուհի՝ ազնուաշուք Տիկին Էլիանոր Տիգրանեան, իր կողքին ունենալով իր դուստրերը Սինտի Նորեանն ու Լորրլ Գարապեանը: Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան ողջունեց անոնց ներկայութիւնը եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Տիկին Տիգրանեանի նման բարեգործ հայորդիներու շնորհիւ Մայր Տաճարին աշխատանքները կը շարունակուին կանոնաւոր կերպով:

Գմբէթի զետեղման ականատես եղան Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեան, Մայր Տաճարի Կառուցման Յանձնախումբի Ատենապետ՝ Տիար Արմէն Համբար, եկեղեցականներ եւ խումբ մը հաւատացեալներ:

Հիւրերը առաջնորդուեցան դէպի Առաջնորդ Սրբազան Հօր գրասենեակը, ուր տեղի ունեցաւ թեթեւ հիւրասիրութիւն: Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց Տիկին Տիգրանեանին եւ յատկապէս յիշեց իր հանգուցեալ ամուսինը՝ Արշակ Տիգրանեանը, յիշեցնելով, թէ Տէր եւ Տիկին Արշակ Տիգրանեանի բարերարութեամբ Առաջնորդարանի ընդհանուր համալիրը կը կոչուէր Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան Համալիր: Աղօթեց Տիկին Տիգրանեանի առողջութեան եւ իր ամուսնոյն հոգիին համար:

Առաջնորդանիստ Մայր Տաճարին կառուցումը պիտի աւարտի 2010ի Մայիսին եւ Օծումը պիտի կատարուի Սեպտեմբերին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ:

# ՊԱՐԻ ՈԳԵՂԷՆՈՒԹԻՒՆԸ

**ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՈՐԼՈՊԵԱՆ**

Հայը, Հայաստանում թէ արտերկրում, դարեր շարունակ կարողացել է յաղթահարել ահաւոր աղէտներ, հաստատել իր ինքնութիւնը եւ գոյատեւել իր իմացական կարողականութեան, ստեղծագործական ջանքերի եւ մշակութակերտական միտումների պատճառով: Նրա այդ ազգային յատկութիւնը չեն կարողացել չէզոքացնել նոյնիսկ հայի նկատմամբ գործադրուած թուրքական ցեղասպանութիւնն ու հայերի զանգուածային արտագաղթը: Այս ճշմարտութեան հաստատումն էր Բժիշկներ Գրիգոր եւ Սրբուհի Տէր Յովհաննիսեանների անուան «Կարաւան» Ակադեմիայի պարախումբի Ապրիլ 26, 2009-ին՝ Գլենդէյլի «Ալեքս» թատրոնում ունեցած փայլուն ելոյթը:

Ազգային հպարտութեամբ եմ արձանագրում այն իրողութիւնը, որ այսօր ամերիկահայ կեանքում գնալով մեծանում է երաժշտական, պարային, մարմնամարզական, ճատրակի, սպորտի եւ նման այլ խմբերի ցանցը: Դրանք իրականացնում են ազգային, քաղաքական, դաստիարակչական, մասնագիտական, ընկերային բնոյթի լուրջ առաքելութիւն եւ էապէս նպաստում ազգային արժէքների միջազգայնացման ու միջազգայինի ազգայնացման: Այդպիսով նրանք շարունակում են իրականացնել Մեսրոպ Մաշտոցի պատգամը, որը առաջադրում էր ուժեղ ազգ կերտելու, մարտնչող մշակոյթ դարբնելու, ուծացման դէմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն զարգացնել սեփական աւանդոյթները, այլեւ իւրացնել համաշխարհայինը՝ առանց կորցնելու սեփական դիմագիծը ու կոյր գնալու օտարին: Ոչ նուազ հաճելի է հաստատել, որ ամէն մի հայ կառոյց այդ ծրագիրը իրականացնում է իւրովի: Ինքնատիպութեան այդ միտումը ընդգծուած է «Կարաւան» Ակադեմիայի գործունէութեան ծրագրերում:

Ապրիլ ամիսը հայ մարդուն վերապրել է տալիս ոչ միայն թուրքերի կողմից կազմակերպուած մեր ազգի ցեղասպանութեան ահաւոր ողբերգութիւնը, այլեւ հաստատում է Մեծ Եղեռնը յաղթահարած հայ ժողովրդի ապրելու, ստեղծագործելու, յարատեւելու աննկուն կամքը: Այս կեցուածքով «Կարաւանը» համերգային իր ծրագիրը բացեց «Տէր Ողորմիայով»: Պրենի Հոնարչեանը մեծ վարպետութեամբ լուծեց Ռուբէն Նիկոլեանի մշակած դէպի յաւերժութիւն տանող խորեոգրաֆական տպաւորիչ պատկերները:

Շուրջ երեք ժամ տեւող հարուստ ծրագիրը ըմբոշխնող հանդիսատեսը համոզւում է, որ գեղարուեստական ղեկավար Ռուբէն Նիկոլեանը, նրա տեղակալ Էդգար Նիկոլեանը եւ միւս պարուսուցչները, Կարինէ Գալուստեանը, Պրենի Հոնարչեանը ձգտել են խմբի անդամներին ոչ այնքան սովորացնել պարային շարժումների մեխանիկական կատարումը, որքան նրանց մէջ արմատաւորել իւրաքանչիւր պարի կառուցքի բաղադրամասերի իմաստաւորուած մեկնաբանութիւնը: Պարողը ոչ միայն շարժումներ է կատարում, այլեւ ապրում է իւրաքանչիւրի նրբութիւնը եւ ըմբռնում է ստեղծագործութեան խորքը: Պա-

Շար.ը էջ 19

Ընտրեցէ՛ք
ՀԲԸՄ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ
Ձեր Զաւակին Լաւագոյն Դաստիարակութեան Համար

AGBU PASADENA HIGH SCHOOL
(WASC ACCREDITED HIGH SCHOOL)

New Student Enrollment
Grades: 9-12

*-Ձեզ ոստիկանատուն տանիլ:*

*-Հիմա՞, անմիջապէ՞ս...*

*-Այո, անմիջապէս:*

*-Եւ եթէ երթալ չուզեմ:*

*-Այն ատեն բռնի պիտի տանինք:*

*-Չէ՞ք գիտեր, որ ես մէպուս եմ:*

*-Գիտենք, բայց մեզի տրուած հրամանը բացարձակ է:*

*Քօմիսէրը կը յայտնէ նաեւ, որ հետեւեալ առտու իսկ, այսինքն քանի մը ժամէն, ճամբայ պիտի ելլէ, հետեւաբար անհրաժեշտ զոյքերը կրնայ հետը առնել:*

*Զօհրապ կը մտնէ իր բնակարանը, ձայն կու տայ իրեններուն, եւ ափյափոյ պայուսակ մը պատրաստելէ ետքը կու գայ կը յանձնուի երկու ոստիկաններուն, իր կնոջ ու աղջկան ողբ ու կոծին միջեւ: Նոյն միջոցին եւ քիչ մը տարբեր պայմաններու մէջ կը ձերբակալուի նաեւ Վարդգէս, եւ առտուն կանուխ երկուքը միասին կը բերուին Հայտար Փաշայի կայարանը:*

*Իրենց կ'ընկերանան եղեր ոստիկան մը եւ սիվիլ հագնուած լրտես մը:*

*Ոստիկանը կ'ուզէ երրորդ կարգի վակոնի մը մէջ մտցնել երկու աքսորականները, Վարդգէս եւ Զօհրապ կ'ընդդիմանան: Ոստիկանը կը պնդէ, առարկելով, թէ վակօնը յատկապէս պատրաստուած է իրենց համար: Երկու տարագիրները ձայն կը բարձրացնեն ու կը*

*պահանջեն, որ առաջին վակոնով մը տարուին:*

*Երկու կողմէն ձայները հետզհետէ կը բարձրանան: Ի վերջոյ Զօհրապ գրպանէն 25 ոսկինոց թուղթ մը կը հանէ, ոստիկանին կու տայ եւ կ ըսէ, որ առաջին կարգի չորս տոմսակ առնէ իրենց համար:*

*-Եթէ ոչ,- կ'ըսէ,- տեղ մըն ալ չեմ երթար:*

*Ոստիկանը կը ստիպուի տեղի տալ, անշուշտ 25 ոսկիէն աւելցած գումարն ալ գրպանելու յոյսով: Ու այսպէս ճամբորդութիւնը կը կատարուի առաջին կարգով:*

*Հայտար Փաշայի կայարանին հայ պաշտօնեաները ճանչնալով Զօհրապը, կ'երթան իմաց տալու Պ. Անտօն Թարաքի, որ կը փութայ վար իջնել, առանց գիտնալու, թէ Զօհրապ ինչ պարագաներու տակ կը ճամբորդէ: Այս վերջինը, երբ կը նշմարէ Պ. Թարաքը, որ դէպի իրեն կու գայ, ձեռքովը նշան կ'ընէ, որ չմօտենայ: Պ. Թարաք, որ վերադարձիս այս մանրամասնութիւնը պատմեց, աւելցուց.*

*-Խեղճ Զօհրապը չափազանց յուզուած, տժգոյն եւ ընկճուած տեսայ:*

*Վակօնին անկիւնը քաշուած, լուռ ու մունջ, անընդհատ կը ծխէր, մինչեւ կառախումբին ճամբայ ելլելը:*

*Գոնիա հասնելնուն՝ երկու տարագիրները ընդունուած են մէկ քանի հայերու կողմէ, որոնք փութացած են իրենց ձեռքէն եկած օգնութիւնը նելու, հակառակ սպառնացող վտանգին:*

*Ոստիկանները թոյլ տուած են տեսակցիլ պայմանաւ, որ թուրքերէն խօսին: Այդ պայմանին տակ բնականաբար խօսակցութիւնը շատ աննշան եղած է: Ատանա նոյնպէս հայրենակիցներ, իմանալուն երկու ծանօթ հայերուն ժամանումը, փութացած են կայարան: Իրենցմէ մէկը, Միհրան Պօյաճեան, ծանօթ վաճառական մը, մօտակայ կայարանի մը համար տոմսակ առնելով, յաջողած է Զօհրապի ու Վարդգէսի հետ տեսակցիլ հայերէն լեզուով, եւ հարցնել, թէ ի՞նչ ծառայութիւն կրնայ մատուցանել իրենց:*

*-Մեր ընտանիքներուն լուր տուէք ասկէ անցնելնիս, ըսած է Զօհրապ,- ուրիշ ծառայութիւն չենք սպասեր ձենէ:*

*-Դրամի եթէ պէտք ունիք, յայտնեցէք:*

*-Ոչ, շնորհակալ ենք, դրամի պէտք չունինք առ այժմ:*

*-Ո՞ւր կը տանին ձեզ:*

*-Տիարպէքիր, դատուելու համար, բայց չեմ կարծեր, որ մինչեւ այնտեղ հասնինք:*

*Եւ Վարդգէս զուարթ ձայնով աւելցուցած է.*

*-Տիարպէքիրի բանտը արդէն ծանօթ է ինծի, աղէկ բանտ մը չէ, բայց աւելի գէշերը կան: Կը տեսնաք սազորը, Տիարպէքիրի բանտին մէջ իմ ընկերս եղած է, հիմակ ալ միասին կերթանք կոր: Հին բանտակիցներ ենք: Հալէպի մէջ, ինչպէս ըսի, Զօհրապ եւ Վարդգէս բաղդատաբար բաւական ազատութիւն վայելած են, շնորհիւ կուսակալին, որ Զօհրապի հին ծանօթ մըն է եղեր:*

*Այդ ազատութենէն օգտուելով՝ տեղացի մէկ քանի հայեր ծրագիրը կը յղանան փախցնելու երկու տարագիրները:*

*Յանդուգն ծրագիր մը թէեւ, բայց ոչ անգործադրելի: Արաբ ուղտապաններու միջոցաւ երկու աքսորականները Պէյրութ կամ Թրիպոլիս փոխադրել կ'առաջարկեն ու հոնկէ նաւով Կիպրոս անցնիլ: Այդ միջոցին Սուրիական ծովեզերքներու վրայ հսկողութիւնը շատ խստացած չէր ու այդպիսի փախուստ մը կրնար յաջողիլ: Վարդգէս հաւանութիւն կը յայտնէ, սակայն Զօհրապ կ'ընդդիմանայ ու բացարձակապէս կը մերժէ, առարկելով, թէ իր առողջութիւնը չի ներեր այդպիսի արկածախնդրութեան մը մէջ նետուիլ:*

*-Եթէ կ'ուզես՝ դուն փախիր,- կ'ըսէ Վարդգէսին:*

*Բայց Վարդգէս չհաւանիր երբեք իր բարեկամը լքանելու:*

*-Ինչ որ ալ ըլլայ, քենէ չեմ բաժնուիր,- կը պատասխանէ:*

*Զօհրապ ան ատեն կը մտածէ դիմում ընել Ճէմալ փաշայի եւ անոր աջակցութիւնը խնդրել եւ այս մտքով գիր մը կ'ուղղէ Սուրիոյ դիկտատորին: Զօհրապի այդ վերջին գրութիւնը, պերճախօս Թուրքերէնով մը գրուած, ինչպէս ինծի հաւաստեց Պ. Մազլըմեան, անպատասխանի եւ ապարդիւն կը մնայ եւ վերջապէս երկու աքսորականները Հալէպէն ճամբայ կ'ելլեն դէպի Ուրֆա: Չեմ գիտեր, թէ որչափ կը մնան Ուրֆա, թերեւս մէկ երկու օր միայն ու հոնկէ կառքով կը մեկնին դէպի Տիարպէքիր, միշտ ոստիկանական հսկողութեամբ:*

*Ահռելի եղեռնը տեղի կ'ունենայ Ուրֆայէն քանի մը ժամ անդին:*

*Թուրք չէթէներու խումբ մը կը պաշարէ կառքը: Չէթէներու պետը, ինչպէս լսեցի Հալէպի մէջ,*

*Շար.ը էջ 19*


ՏԵՍԷ՞Ք ԵԹԷ BANKRUPTCY-Ի ՕՐԷՆՔՆԵՐԸ Կ'ՕԳՆԵՆ ՁԵԶԻ, ԶԱՆԳԱՀԱՐԷՔ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209


Nazareth V. Jansezian, Esq.

# ԹՈՐՈՆԹՕ
# ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 94ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ

*Թորոնթոհայութիւնը, կրօնական ազգային ու քաղաքական հաւաքոյթներով յիշատակեց Հայ ժողովուրդի Մեծ Եղեռնի 94րդ տարելիցը:*

*24 Ապրիլ 2009-ը, Ուրբաթ օր երեկոյեան ժամը 8ին Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ մէջ, Հայ Հարանւանութեան Սուրբ Երրորդութիւն, Ս. Աստուածածին Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներու միացեալ մարմնի հոգեպարար արարողութիւններուն՝ բազմահարիւր հաւատացեալներ ներկայ գտնուեցան իրենց նահատակներուն յիշատակին վերանորոգելով պահանջատիրական ուխտը:*

*Պատգամաբերը պատուելի Գրիգոր Աղապալօղլեան, Պոլսէն, ապա հոգեւոր հայրերու առաջնորդութեամբ ծաղկեպսակը դրուեցան Նահատակաց յուշարձանին վրայ:*

*Ուրբաթ, 25 Ապրիլ 2009-ը հրաւէրով Թօրոնթոյի Ս.Դ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի ազգային կազմակերպութիւնները միասնաբար ծրագրեցին Յուշահանդէս 94րդ Տարելիցի, մասնակցութեամբ Ս.Դ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի, Ռ.Ա.Կ. «Եսայի Եագուպեան» ակումբի, Հ.Բ.Ը.Մ.ի, Պոլսահայ Մշակութային Միութեան, Թորոնթոյի Ասպետներու Ալիշան Դահլիճի, Թ.Մ.Մ. Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. եկեղեցւոյ «Մակարա Արթինեան» սրահին մէջ, բանախօսեց Տօքթ. Տիգրան Աբրահամեան, գեղարուեստական բաժնին մաս կազմեցին Թօրոնթոհայ վարժարաններու աշակերտները, Հ.Բ.Ը.Մ. «Ծառուկեան» ամենօրեայ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ Վարժարանի Շաբաթօրեայ եւ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ Շաբաթօրեայ վարժարանի աշակերտները խմբերգներով, խմբային արտասանութիւններով տպաւորեցին ներկաները:*

*Թորոնթոհայ «Նայիրի» երգչախումբը Գէորգ Էմինի Տէր Զօր ու Ապրիլեան Նահատակներուն նուիրուած եւ Հայաստան խմբերգներով յիշատակեցին մեծապէս տպաւորելով երեկոն, Մայէստրօ Սարգիս Համպոյեանի ղեկավարութեամբ: Օրուայ անակնկալը, Քանատայի բազմամշակութային եւ գաղթականաց նախարարութեան ներկայացուցիչ տիկնոջ ներկայութիւնը հրապարակային դատապարտութիւնը եղաւ Հայկական Եղեռնի, 20րդ դարու առաջին ցեղասպանութեան Թուրք օսմանեան պետութեան կողմէ, դատապարտելով ու ճանչնալով կատարուած ոճիրը, կոչ ուղեց դպրոցական պատանիներուն որպէս յաջորդող սերունդ կարդաց նախարարութեան եւ վարչապետին հայ ժողովուրդին ուղղուած զօրացման գիրերը, անգամ մը եւս վարչապետի ու նախարութեան անունով հաստատելով Եղեռնի մեծ ոճիրը:*

*Ազգային միացեալ հանդիսութեան հովանաւորող Քանատայի Հայոց առաջնորդ՝ Գերշ. Բագրատ Եպս. Գալստեանի բացակայութեան, փակման խօսքը կատարեց Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Զարեհ Աւ. Քհնյ. Զարգարեան:*

*Եկեղեցականներու ձեռամբ ու Տէր Զարեհի, Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրաճեանի ծաղկեպսակը առաջնորդուեցաւ դէպի Նահատակաց Յուշարձանը, ներկայ ժողովուրդը պատրաստ մեխակներով ուղղուեցան դէպի յուշարձան:*

*Նախ քան Միացեալ Յանձնախումբի անունով Իզա Պասմաճեան շնորհակալութեան խօսքը ուղղեց Յուշահանդէսին զօրակցող կազմակերպութիւններուն, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ ծխական խորհուրդին ու հովիւին, բանախօսին, ազգային վարժարաններու խնամակալութեան եւ ուսուցչական կազմերուն, մասնաւորաբար Սրբազան Հօր հանդէսի հովանաւորութեան համար:*

*Կիրակի, 26 Ապրիլ կէսօրէ ետք ժամը 2:00ին Հայ Կեդրոնի մէջ Հայ Դատի կազմակերպած քաղաքական Յուշահանդէսը եւս տեղի ունեցաւ յաջողութեամբ խօսք առին ներկայ քաղաքական անձնաւորութիւններ:*

# Տ. ՆՈՐՎԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐԵԱՆԸ ՆՇԱՆԱԿՈՒԵԼ Է ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ



*Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինութեամբ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանն ազատուել է Արեւմտյան Եւրոպայի Հայրապետական պատուիրակի պարտականութիւններից եւ կոչուել հանգստի:*

*Նորին Սրբութեան նոյն տնօրինութեամբ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական նոր պատուիրակ է նշանակուել Ֆրանսայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանը:*



# ՀԱՄԲԱՐՁՈՒՄ «ԵԱՅԼԱ»...

*ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ*

Հայկական բարձրավանդակ, լեռների երկիր Նայիրեան, դէպի երկինք ճախրող լեռներ, որ աստղեր քաղէին ու այն բերէին իրենց գագաթներին բազմելու: Նրանց ընդերքից կրակ էր ժայթքել, լոյսով ցօղելով երկինք արմէնների: Դաշտավայրի երկիրների բնիկներ, զմայլած նրանց հրացոլքով, կրակի երկիր Նայիրի էին կոչել այն, դրախտիկ երկիր, մարդկութեան օրրան կոչել այն եւ իրեն դաշտերը ոռոգող ու իրենց տապը մեղմող գետերը՝ Եփրատ, Տիգրիս, Արածանի, Արաքս դրախտի գետեր անուանել: Մայիս, գարնան հեքիաթն էր գրկել լեռները, արեւն էր իջել իր կրակ վարսերով համբուրելու նրանց լանջերը՝ լոյսի կրակ ցօղելու իրենց ափերով պահած դաշտերին, այգիներին: Զարթնում էր հայոց աշխարհը, լեռները արեւներ գրկած՝ թօթափում էին իրենց սպիտակ հանդերձը: Գարնան շնչով էին հէքիաթացել լեռները, ձիւնն էին պատռում կարմիր, սպիտակ, կապոյտ ծաղիկները: Ծաղկում էին դաշտերը, պայթում էին ծառերը, ծաղկած ծիածանով էին քօղւում, ծաղկում էր հայոց աշխարհը, ծաղկում էին արմէնների սրտերը, յաւերժութեան խորհրդանիշ նռնենիներն էին պայթում կարմիրով, արիւն էին ժայթքում հոնի ծառերը:

Իմաստուն արմէնները պաշտամունք էին նուիրել բնութեան գարնանային սքանչանքին՝ արեւի ու աստղերի լոյսից պայթած ծաղիկներին, որոնք լեռների լանջերին, դաշտերին, այգիներին էին իջել, ծառերից յուռթելով անուշ ժպտում անցորդներին իրենց լոյսը շաղելով մարդկանց սրտերին, նրանց հոգիներին լոյս զուարթութիւն էին ցանում: Բնութիւնն իր տիեզերական հրայրքն է ցօղել ծաղիկներին, որ նրանք էլ յորդեն սիրով, գգուեն իրար ու մայրանան: Եւ մայր բնութեան սքանչանքով արբեցած արմէնները, ամէն տարուայ Մայիսին պաշտամունքի խրախճանք էին նուիրել՝ բնութեան առեղծուած ծաղիկին, արեւն էր իջնում համբոյր շաղելու նրանց շրթներին: Կանաչով էին պուրթկում ծառերը, լեռների լանջերը կանաչով էին շաղւում, ծաղիկները իրենց ծիածանով հրավառում այն, եւ ինչպէս չպուրթկային հայոց սրտերը ծաղիկների սիրով: Իմաստուն արմէնները առեղծուած ծաղիկը պաշտեցին, Արարատի լանջերի ձնծաղիկների կարմիր բոցերից իրենց գեղեցկութեան ու սիրոյ Աստղիկ դիցուհին յառնեց, բնութեան պաշտամունքից Մայր Անահիտ արարեցին, բուքից ու խոնջէնքից մարդկանց իր խրճիթներում ապաստանելու համար հիւրընկալ Վանատուր ստեղծեցին, իրենց երկրի եղեգան բոցից Վահագն պատերազմի աստուածը յառնեց, որ իրենց հետ պատերազմի դաշտ իջնէր, իրենց սրտերին բանաստեղծութիւն ցօղեց աստուածների սուրհանդակ-ատենադպիր Տիրը:

Եւ մարդացած Յիսուսը սիրոյ շողերի, խաղաղութեան անդորրի, յոյսի, հաւատքի, բարութեան լոյսը բերեց տիեզերքից եւ այն ցօղեց մարդկանց հոգիներին: Շուայտացած աշխարհին տիեզերքի բարութիւնը ցանեց: Դպիրները ու Փարիսեցիները խաչեցին մարմինը նրա, սակայն, նրա սիրոյ լոյսի խորհուրդը ծաղկեց մարդկանց հոգիներում: Խաչուելուց յետոյ, քառասուն օրեր նորէն եղաւ իր աշակերտների հետ, պատգամեց նրանց գնալ աշխարհներ՝ սէր ու խաղաղութիւն քարոզելու, որից յետոյ համբարձաւ դէպի իր տիեզերական կացարանը:

Արեւմտեան մշակոյթով ու գիտելիքներով իմաստացած հայոց քաջ թագաւորն Տրդատ, հայերին առաջնորդեց Նոր հաւատքի լոյսին: Իմաստուն արքան պահպանեց նախնիների աւանդութիւնները, որոնց արձագանգները ցայսօր ղօղանջում են հայոց սրտերի ծովակներում: Նոր հաւատքի լոյսի շղարշով քօղեցին հայոց հեթանոսական տիեզերական պաշտամունքի բոլոր, բոլոր տօնախմբութիւնները: Մայիս ամսուայ հեթանոս հայերի ծաղկի պաշտամունքի տօնը փոխարինել էին՝ կարմիր լոյսի սիւներով դէպի տիզերք մեկնող՝ Յիսուսի հրաշափառ Համբարձման փառաբանման տօնակատարութեամբ, որպէս կեանքի յարատեւութեան խորհրդանիշ:

Եւ հայ աղջիկները ամէն Մայիսին բարձրանում են իրենց լեռների լանջերը, Բիւրակնից դէպի ձիւնոտ Արագած, Լոռուայ կախարդական սարեր, ծաղիկներ քաղելու, այն որպէս հարսանեկան պսակներ իրենց ճակատներին կապելու, բազում տեսակի ծաղիկներ նետելու փարչերի ջրի մէջ, որ ջրուէն նրանով, որ հայկեան հողի սարսուռն իջնի իրենց հոգիներին: Ով է հիմա հայոց գերուած լեռների՝ Արարատի, Սիփանի, Նեմրութի լանջերի ծաղիկներին հպում, երեւի անժամանակ թառամում են, թօշնում են ցաւի մրմունջներից: Հայոց աղջիկները ուր են որ հպեն նրանց, քաղեն նրանց, ժպտան նրանց, իրենց լանջերին փարեն ծաղիկների փունջերը: Հայոց պատմութիւնը աւարտուած չէ, դեռ հայոց աղջիկները պիտի քաղեն Արարատի ձնծաղիկները, հայոց լեռների լանջերի բրափիոն ծաղիկներ պիտի ձօնեն հայոց քաջերին, Նեմրութի գագաթին իջած իրենց աստուածների ճակատներին ծաղկէ պսակներ պիտի կապեն:

Տարագիր, անհող հայ, քու նոր հանգրուանում, դու այսօր արդեօ՞ք տօնախմբում ես քու Յիսուսի Համբարձման տօնը, քու նախնիների ծաղկի պաշտամունքը, քու սարերի «Համբարձում Եայլա»ն: Որտեղից ես դու ծաղիկ քաղելու, քու լեռների լանջերի, հանդերի մայր հողի ծաղիկ չիք այստեղ: Քու մտքի թռիչքով սաւառնիր Յովհաննէսի Լոռուայ աշխարհ, նրա լեռների լանջերի ծաղիկների մէջ ընկղմիր, քաղիր մայր հողից ծաղիկներ, շաղ տուր այն քու յոգնած մարմնին, տես ինչքան պիտի զօրանաս: Գնա Անուշի հովուական վրանի բացատ, «Ջան Գիւլում»ի եկած աղջիկների հետ բոլորակ կազմիր, խնճթացիր երգով ու ծիծաղով: Նրա լանջերի պայթած աղբիւրներից կուժերով ջուր բեր, ծաղիկների բոյրը լցրու այնտեղ, քու հիւսած ծաղիկների պսակները նետիր Դեբետի փրփրած ալիքներին, իջիր նրա ջրերին, մի պսակ ճանկիր այնտեղից, որ քու եարին տիրելու ցանկութեանը տիրանաս:

Ոչ, Յովհաննէսն ու իր Անուշը, Սարոն, Մօսին այստեղ չեն գայ, նրանց խորհուրդը իրենց լեռների լանջերի ծաղկունքի մէջ է, լացող ուռենիների ստուերներում սպաննուած սէր են երգում, Դեբէտի ջրերի փրփուրները գրկած կանչում են Անուշ, Սարօ, բարձր սարերիս ձէն են տալիս, իրենց եարին...: Գնա՛ միացիր հայոց աղջիկներին, որոնք Լուսաւորիչի կանթեղի լոյսով ցօղուած, Արագածի լանջերին ծաղկի պաշտամունքի ու հրաշափառ Համբարձման տօն «Ջան Գիւլում» են տօնախմբում: Պիտի երգեն ամպերի տակից հոսող անձրեւը, պիտի թրջուեն նրանց հոգիները հայու ոգեղէն սարսուռով, պիտի երգեն Սայաթ Նովու սիրոյ երգերը, պիտի երգեն հովիւներին, պիտի երգեն իրենց սարերը եւ ծաղիկների պաշտամունքի հրայրքից արբեցած՝ նորէն պար պիտի բռնեն, Արագածի քառագագաթները գրկած: Թող ոչ մի պարմանուհու չար բախտ չգուշակեն, թող բոլորը ցնծան սիրոյ կանչերի ղօղանջներից, թող խնդան հայերը, թող ցնծան հայոց սրտերը, թող իրենց անկախացած երկրի դրօշի ծիածանը յոյսի ու սիրոյ լոյս փռի իրենց դէմքերին:

Հայ, այստեղ չիք հայոց լեռներ, չիք նրանց լանջերի ձիւնոտ ծաղիկ, պայթող աղբիւրներ, սակայն տօնախմբիր քու նախնիների ծաղկի պաշտամունքը, քու Յիսուսի հրաշափառ Համբարձումը, բոլորիր շուրջդ քու մանչերին, երգիր նրանց, քու նախնիների պաշտամունքը ցանիր նրանց հոգիներին, որ նրանց Հայկեան արմատները ամրանան եւ որպէս Հայ տողանցեն այս մոլորակում:

# ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

*Շարունակուած էջ 5-էն*

մակերպած ընտրական հաւաքին: Կուսակցութիւն մը, որ 122 տարիներ շարունակ տարած է հետեւողական եւ բոլորանուէր պայքար ի խնդիր ազգային, հայրենասիրական եւ համամարդկային սկզբունքներուն: Պատրաստուինք բոլորս Յունիս 7-ին ուղղուելու դէպի քուէատուփ արժեւորելով մեր ձայնը յանուն՝ 14 Մարտի ցանկերուն, պետականութեան կայացման, յանուն՝ ազատ, անկախ եւ գերիշխան Լիբանանին:

Պէյրութի Առաջին ընտրաշրջանի Հայ Կաթողիկէ համայնքի պատկան աթոռի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան առաջադրած թեկնածու Մեթր Սերժ Թուրսարգիսեան յատուկ ողջոյն մը յղեց Նոր Հաճնոյ եւ Խալիլ Պատաուիի բնակիչներուն: Ան յայտնեց, թէ Յունիս 8-ին դարձեալ միասին համախմբուած պիտի տօնենք Մարտ 14-ի Ուժերուն ընտրական յաղթանակը: Մեթր Սերժ Թուրսարգիսեան ըսաւ, թէ կասկած չունէր խորհրդարանի յառաջիկայ ընտրութիւններուն համար Մարտ 14- Ուժերուն յաղթանակէն: Ան ըսաւ. «Մենք երեսփոխանական ընտրութիւններու պայքարը կը մղենք ի խնդիր քրիստոնեաներու իրաւունքներուն վերահաստատման:

Եկէք այս պայքարը մղենք ի խնդիր ազատ կարծիքի պաշտպանութեան, ի խնդիր երիտասարդութեան դերակատարութ եան քաջալերման, ի խնդիր օրէնքներու ճամբով կնոջ դերակատարութեան ամրապնդման:

Մենք ընտրութիւններու պայքարը կը մղենք, որպէսզի զէնքը եւ անոր օգտագործումը ըլլան մենաշնորհ՝ Լիբանանեան բանակի ձեռքերուն մէջ եւ որպէսզի ապահովուի օրէնքի գործադրութիւնը՝ Լիբանանի ամբողջ տարածքին վրայ:

Մենք, որպէս Մարտ 14-ի թեկնածուներ, Հնչակեան կուսակցութեան հետ միասին կողմ ենք հանրապետութեան նախագահի լիազօրութիւններու ամրապնդման՝ ոչ խօսքով, որովհետեւ ան որ կ'ուզէ իրապէս եւ անմիջապէս ամրապնդել առաջին նախագահութեան դիրքերը, պէտք է համաձայն ըլլայ, որ «երաշխաւոր երրորդական մասը» կառավարութեան մէջ ըլլայ հանրապետութեան նախագահին հետ:

Պէյրութի Երկրորդ ընտրաշրջանի Սիւննի համայնքի պատկան աթոռին թեկնածու Տիար Նուհատ Մաշնուք ըսաւ թէ մինչեւ վերջերս կը խորհէր թէ խորհրդարանի ընտրութիւնները պիտի ըլլան սովորական գործընթաց մը, սակայն ան ընդունեց որ կը սխալէր իր կարծիքին մէջ, որովհետեւ միայն վերջերս համոզուեցաւ որ ընտրութիւնները պիտի ըլլային ճակատագրական:

Մաշնուք գնահատեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը, որ կառչած մնաց իր սկզբունքներուն եւ հաւատարիմ՝ ազատ, գերիշխան եւ բարգաւաճ Լիբանանի տեսլականին: Ան մերժեց զէնքի ընտրանքը, նշելով որ Մարտ 14-ի Ուժերը կը հաւատան երկխօսութեան: Իր խօսքի աւարտին, Մաշնուք ներկաները հրաւիրեց Յունիս 7-ի օրը քուէարկել կայուն, արդար եւ հզօր պետականութեան:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան նորընտիր երեսփոխան Ընկեր Սեպուհ Գալփաքեան:

Յարգելի ընկերը յայտնեց, թէ միջազգային ատեանը պիտի բացայայտէ ճշմարտութիւնը եւ յանցագործները պիտի կրեն իրենց պատիժը: Ընկերը ըսաւ, որ Յունիս 7-ին քուէատուփերուն պիտի ներկայանանք դեմոկրատական, ազատ Լիբանան մը կերտելու հաւատքով: Ընկերը մերժեց բռնութիւնը եւ փողոցի միջոցաւ կամք պարտադրելու ընտրանքը, ընդգծելով որ Մարտ 14-ի Ուժերը կը հաւատան երկխօսութեան եւ ժողովրդավարական եղանակներով պաշտպանելու իրենց իրաւունքը:

Այսօր ամենայն հպարտութեամբ կը յայտարարենք, որ մենք մաս կը կազմենք 14 Մարտի Ուժերու, որոնց հետ մեզ միացնողը անկախական գաղափարներն են եւ հասարակաց մտապատկերը՝ երկրի ապագային: Մարտ 14-ի Ուժերուն մաս կազմելով հանդերձ, մենք կառչած կը մնանք մեր հայկական ինքնութեան եւ գաղափարական իւրայատկութեան:

Որպէս Հնչակեան կուսակցութիւն, պիտի աշխատինք ի խնդիր Մարտ 14-ի Ուժերու ամբողջական ընտրացանկերուն յաջողութեան:

Հաւաքի աւարտին բեմ բարձրացան նորընտիր երեսփոխան Ընկեր Սեպուհ Գալփաքեան, երեսփոխանութեան թեկնածուներ Նուհատ Մաշնուք, Մեթր Սերժ Թուրսարգիսեան, պետական նախարար Ժան Օղասապեան, ներկայ երեսփոխաններ Ընկ. Տոքթ. Եղիկ Ճէրէճեան եւ Պարոն Յակոբ Գասարճեան, որոնք արժանացան ներկաներուն ծափահարութեան:

Այս միջոցին տեղի ունեցաւ հրավառութիւն եւ Սահակեանի երկնակամարը փայլեցաւ գոյնզգոյն ուրախութեան բոցերով:

Հանրահաւաքի վերջաւորութեան գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, ուր սիրուած երգիչներ Կարօ Կապուտակեան եւ Պերճ Սարգսեան յաջորդաբար մինչեւ երեկոյեան ուշ ժամեր ներկաները ոգեւորեցին իրենց ազգային-հայրենասիրական երգերով:

825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday—Saturday
9 am - 8 pm

# MISSION
## Wine & Spirits

1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday—Saturday
9 am - 8 pm

| | | | | |
|---|---|---|---|---|
| GREY GOOSE VODKA 21.99 | CAZADORES REPOSADO 19.99 | JOHNNIE WALKER BLACK LABEL 19.99 | PATRÓN SILVER 29.99 | Hennessy COGNAC VS 22.99 |
| RUSSIAN STANDARD VODKA 9.99 | Don Julio 1942 79.99 | JOHNNIE WALKER BLUE LABEL 129.99 | El Massaya AUTHENTIC arak LEBANON 19.99 | Hennessy COGNAC VSOP 33.99 |
| IMPERIA VODKA 17.99 | Jose Cuervo TEQUILA ESPECIAL 10.99 | JOHNNIE WALKER GOLD LABEL 49.99 | BACARDI RUM 8.99 | Hennessy COGNAC XO 109.99 |
| PRAVDA VODKA 19.99 | Crown Royal CANADIAN WHISKY 14.99 | JOHNNIE WALKER RED LABEL 15.99 | Captain Morgan SPICED RUM 10.99 | ABSOLUT VODKA 14.99 |
| SKYY VODKA 8.99 | JACQUES CARDIN COGNAC VSOP 15.99 | JOHNNIE WALKER GREEN LABEL 39.99 | SMIRNOFF VODKA 9.99 | 1800 TEQUILA SILVER 100 PROOF 17.99 |
| CHIVAS REGAL 12 16.99 | COURVOISIER Cognac VS 18.99 | Dewar's 12 Yr Old Whisky 16.99 | BACARDI RUM 15.99 1.75L | PATRÓN XO Cafe 17.99 |
| Stoli ELIT VODKA 44.99 | ROSKOV VODKA 4.99 | Dewar's 18 Yr Old Whisky 44.99 | Three Olives VODKA 17.99 1.75L | roberto cavalli VODKA 38.99 |
| NOY 5 Yr Armenian Brandy 16.99 | Gantous & Abou Raad Arak 11.99 | TOUMA ARAK 12.99 | Corona Extra 12 PACK 11.99 | Heineken 24 PACK 22.99 |

•Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 05/31/09 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded
Prices subject to change without notice • No CCs • All items are 750ml in size unless specified.

## ԱՐԴԷՆ ԻՍԿ ՆԿԱՏԵԼԻ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԻՐՏ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 6-էն*

օրը ազդարարուի քարոզարշաւի նոր, աւելի ակտիւ փուլի մեկնարկի մասին:

*= Ես ձեռնպահ կը մնամ նախօրօք խօսել հանրահաւաքի օրակարգի մասին, բայց կարծում եմ, որ հիմնական «մեխը» անխուսափելիօրէն լինելու է առաջիկայ ընտրութիւնները, սպասուելիք զարգացումները, նաեւ՝ աշխարհաքաղաքական ներկայ գործընթացները: Այդ հանրահաւաքի միջոցով եւս մէկ անգամ հասարակութեանը հասու կը դարձուի մի պարզ ճշմարտութիւն, այս երկրի ցանկացած քաղաքացի պէտք է գիտակցի իր անձի կարեւորութիւնը երկրի կառավարման գործընթացում:*

*Այդ հանրահաւաքին իրենց մասնակցութիւնն ապահովող մեր համաքաղաքացիները եւս մէկ անգամ կը համոզուեն, որ Համաժողովրդական շարժումը մէկուկէս տարուայ ընթացքում կարողացել է օր օրի հզօրանալ, դառնալ իշխանութիւններին ռէալ հակակշիռ եւ այլ այլընտրանք, քան՝ յաղթանակը չունի: Իսկ աւագանու ընտրութիւնները շատ կարեւոր, կենսական նշանակութիւն ունեցող քայլ են այդ յաղթանակի ճանապարհին: Այդ ընտրութիւններում մեր անվերապահ յաղթանակը կը լինի երկրում սահմանադրական կարգը վերականգնելու ՀԱԿ-ի առաքելութեան առաջին փուլը, ինչին կը հետեւի երկրի առողջացմանն ուղղուած միւս գործողութիւնները եւ երկիրը շատ արագ կը կանգնի իշխանափոխութեան փաստի առաջ:*

## ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ ԻՐ 29-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ

*Շարունակուած էջ 7-էն*

*տարածման, հայապահպանման, առաքելութիւն՝ զոր պիտի շարունակէ, տնօրէն, ուսուցիչ, բարերար, ծնող եւ հոգաբարձու՝ միշտ, ձեռքձեռքի, սերտ գործակցութեամբ:*

*Սաներու կողմէ ազգային քայլերգներու նուագարանային կատարողութենէ ետք, բացման խօսքով հանդէս եկաւ Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի Տնօրէն Պրն. Շահէ Կարապետեան, որ իր շնորհակալական խօսքի արտասանութենէն ետք, պարզ ու հաճելի կշռոյթով մը, հանդիսատեսներուն ներկայացուց յոբելինական ձեռնարկի նպատակը, որ ուրիշ բան չէր եթէ ոչ՝ նաեւ դրամահաւաք: Պրն. Կարապետեան, հանգամանօրէն յետադարձ ակնարկով մը անդրադարձաւ Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի կազմութեան պատմական հանգրուաններուն եւ անցած 29 տարիներու վրայ ծաւալած կրթական, հոգեւոր, մշակութային, մարզական գործունէութեան, ինչպէս նաեւ անոր արձանագրած շօշափելի ձեռքբերումներուն եւ յետագայ ուսումնական ծրագիրներուն վրայ, անշուշտ ներառելով վարժարանին ընդարձակման հրամայականը: Յարգելի տնօրէնը անգամ մը եւս ողջունեց ներկաները մաղթելով բոլորին հաճելի ժամեր, ներկայ տօնախմբութեան բարեբաստիկ առիթով:*

*Այնուհետեւ դէպի բարձրախօս հրաւիրուելով, բացման համապարփակ եւ ներշնչող աղօթքով հանդէս եկաւ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Հովիւ՝ Վեր. Յովսէփ Մաթոսեան, որ օրհնեց դպրոցը, ձեռնարկը, սեղաններն ու ներկաները եւ մաղթեց բոլորին ամենայն բարիք եւ գուարճութիւն:*

*Իր սրտի խօսքին մէջ, Տ. Յովսէփ Ա. Քհնյ Յակոբեան, դիտել տալէ ետք, թէ «շնորհիւ բարի մարդոց աջակցութեան է որ կը գոյատեւէ Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը», շնորհաւորեց վարժարանի 29-րդ ամեակը եւ մաղթեց նորանոր յաջողութիւններ, ապա, Ա.Քհնյ. Հայրը, հանգամանօրէն փոխանցեց Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի շնորհաւորական խօսքն ու ծնողներուն առաքուած պատգամը, համանուն դպրոցի 29-ամեակի բարեբաստիկ առիթով: Յայտնելէ ետք թէ ան ջերմօրէն կը սիրէ բոլոր փոքրերը, Առաջնորդ հայրը պատգամեց ծնողներուն, «աղօթել սորվեցնել փոքրերուն:»:*

*Ծանօթ արուեստագիտուհի Նունէ Աւետիսեան գնահատեց եւ շնորհաւորեց յոբելեար դպրոցը, ծնողները եւ դպրոցին շուրջ բոլորուած բարեկամները, որոնք զօրավիգ կը կանգնին անոր նիւթապէս եւ բարոյապէս: Նունէ Աւետիսեան կրկին անգամ գնահատելէ ետք Սահակ-Մեսրոպ դպրոցի 29-րդ ամեակը, գեղարուեստական բարձր կատարողութեամբ ասմունքեց Պարոյր Սեւակի «Բարեւ» եւ Գէորգ Էմինի «Զարմանալի» եւ «Զգոյշ Խօսիր» ոտանաւորները, որոնք խորը տպաւորութիւն թողուցին ներկայ հանդիսատեսներուն վրայ:*

*Յատուկ ուշադրութեան առարկայ դարձաւ «Էլմէնթ» նուագախումբը իր ազգագրական նուագացանկով եւ երգերով:*

*Օրուան գլխաւոր բանախօս Հոգշ. Տէր Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան շեշտը դնելով մեր զաւակներուն ապագայ կեանքի յաջողութեան համար թափուած ճիգերուն վրայ, կոչ ուղեց ներկաներուն զօրավիգ կանգնիլ վարժարանին նիւթապէս եւ բարոյապէս: Կը ցնծանք ի տես մեր դպրոցի յաջողութիւններուն, եւ որպէսզի միշտ ցնծանք, պէտք գիտնանք նաեւ ցնծալ, որ նշանակէ նիւթական յատկացնել, դրամական օգնութիւն կատարել: Հոգշ. Տէր Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան պատգամեց ծնողներուն, իրենց զաւակները վստահիլ ճշմարիտ հայկականութիւն սերմանող եւ ճշմարիտ քրիստոնէական կրթութիւն ջամբող դպրոցներ, ինչպիսին է ըսաւ ան, Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը: Հայր Սուրբը Հոգեկան բաւարարութիւն առթող բարոյախօսական գուարթացնող դրուագներով համեմեց իր պատգամը, որ ջերմօրէն գնահատուեցաւ ներկայ հասարակութեան կողմէ:*

*Վարժարանի Տնօրէն Պրն. Շահէ Կարապետեանի շնորհակալական եզրափակիչ խօսքով, Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի 29-րդ ամեակին նուիրուած ներկայ ճաշկերոյթ տօնախմբութիւնը հանգաւ իր աւարտին զուարթ մթնոլորտի մէջ:*

*«Մասիս» շաբաթաթերթը իր կարգին, ջերմօրէն կը շնորհաւորէ Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի 29-րդ ամեակը, կը մաղթէ յաջողութիւն անոր առաջադրած կրթանուէր բոլոր ծրագիրներուն: Նաեւ, «Մասիս» շաբաթաթերթը բարձր կը գնահատէ Սահակ-Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանի կրթական, մշակութային, ազգային եւ հայրենասիրական առաքելութիւնը այս օտար ափերուն, ուր եթէ հայ մնալը հերոսութիւն է, կրկնակի հերոսութիւն է հայը հայ պահելը:*

*Բարի 29-րդ ամեակ:*

## ԵՂԵՌՆԻ ՅԻՇԱՏԱԿՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

*Շարունակուած էջ 7-էն*

*Վաչէ Մանկրեանն էր, որ իրենց խօսեցաւ Կոմիտաս Վարդապետի մասին: Իր դասախօսութեան ընթացքին Պրն. Վաչէն օգտագործեց Իզապէլ Պայրաքտարեանի «A long Journey Home» վաւերագրական շարժապատկերէն Կոմիտասին առնչուող բաժինները: Սոյն շարժապատկերի մէկ տեսարանէն ազդուելով տնօրէն Պրն. Շահէ Մանկրեան աշակերտներուն ըսաւ. «Տեսանք շարժապատկերին մէջ, որ հազարամեայ կեանք ունեցող կոթողներ ու եկեղեցիներ կերտած են մեր նախահայրերը, եւ հայ ժողովուրդը մի քանի հազարամեակէ ի վեր գոյութիւն ունի եւ գոյատեւման համար հայ լեզուի ու մշակոյթի պահպանումը անհրաժեշտութիւն է»: Ապա, նպատակ ունենալով արթնցնել աշակերտներուն մօտ հայերէն լեզուի նկատմամբ յաւելեալ յարգանք ու գորգուրանք, աշակերտներուն առիթ տուաւ արտայայտելու իրենց կարծիքները, թէ եթէ շարունակեն Հայերէն խօսելու փոխարէն անգլերէն խօսիլ, կը կարծե՞ն որ հազար տարի ետք հայութիւնը գոյութիւն կ՛ունենայ: Լաւ առիթ մըն էր աշակերտներուն համար լսել իրարու կարծիքները եւ հաճելի էր իմանալ, որ մեծամասնութիւնը համամիտ էր, որ անհրաժեշտ է լեզուին պահպանումը, որուն միջոցաւ կարելի կ՛ըլլայ ապահովել ազգին գոյատեւումը:*

*Երկրորդ հիւրն էր գծագրիչ Տիկին Սիրուն Երէցեանը, որ աշակերտներուն խօսեցաւ մանրանկարչութեան մասին եւ իւրաքանչիւր աշակերտ, հետեւելով Տիկ. Սիրունին ցուցմունքներուն, իր անուան սկզբնատառը ներկեց թռչնագիրով:*

*Յետմիջօրէին, Մանկապարտէզէն-Ը. կարգի աշակերտութիւնը հաւաքուելով դպրոցիս Գալուստեան-Տունայեանց սրահը, խումբ մը ծնողներու ներկայութեամբ ոգեկոչեցին Եղեռնի 94րդ տարելիցը: Մանկապարտէզի աշակերտները արտասանեցին . Սեւակի «Մենք Քիչ Ենք» ոտանաւորը, ապա Ա.-Դ. կարգի աշակերտները ներկայացուցին վերոյիշեալ Արարատ Տան մէջ ներկայացուած յայտագիրը: Ե. կարգի աշակերտները հիանալի հաղորդականութեամբ արտասանեցին Դ. Վարուժանի «Դերենիկը», իսկ Զ. կարգի աշակերտները արտասանեցին Յ. Թումանեանի «Օրհնութիւն» ոտանաւորը: Է. կարգի աշակերտներէն Ալէքս Պէրպէրեանը, դաշնամուրի վրայ նուագեց Ա. Խաչատուրեանի «Ժողովրդական Նմանողութեամբ» կտորը: Նաեւ Է. կարգի աշակերտները ներկայացուցին Ժ. Քասունիի «Հայուն եւ Թուրքին Ձայնը» եւ «Ապրիլ 24» թատրոնները, որոնցմով հարազատօրէն բեմականացուցին ջարդի ու գաղթի տեսարանները եւ լկտի թուրք փաշաներուն անխղճօրէն կատարած արարքները: Ապա, Ը. կարգի աշակերտները Ռ. Պատկանեանի «Կենանցից Թանկ Բանը» խմբային արտասանեցին: Հանդիսութեան աւարտին խօսք առաւ դպրոցիս տնօրէնը՝ Պրն. Շահէ Մանկրեանը, ու աշակերտներուն ուշադրութեան յանձնեց հայ լեզուին ու մշակոյթին պահպանները ըլլալու անհրաժեշտութեան մասին, որպէսզի կարելի ըլլայ ճերմակ Ջարդին յաղթահարել:*

*Դպրոցի Ը. կարգի աշակերտներու նախաձեռնած Ասմունքի Երեկոն, տեղի ունեցաւ նոյն օրուան երեկոյեան, դարձեալ «Գալուստեան-Տունայեանց» սրահէն ներս: Ը. կարգի աշակերտները, իրենց անգլերէն լեզուի ուսուցիչ-տնօրէն՝ Պրն. Շահէ Մանկրեանի ղեկավարութեամբ, ընտրած էին եւ արտասանեցին օտար հեղինակներու գործերը, որոնք տարբեր ցեղասպանութիւններու մասին էին, իսկ. Պրն. Շահէն իւրաքանչիւր ոտանաւորէն առաջ ընթերցեց մեր վերապրողներու վկայութիւններէն, ունկնդիրներուն զարմանքն ու ուշադրութիւնը գրաւեց այն իրողութիւնը, որ հասարակ շատ յայտարարներ կային մեր եւ միւս ազգերու պատահած ցեղասպանութիւններու՝ նկարագրման մէջ: Երեկոն վերջ գտաւ Ը. կարգի աշակերտներուն «Կեանքից Թանկ բանը» ոտանաւորին խմբային արտասանութեամբ:*

*Տեղին է նշել, որ Ապրիլ ամսուան ընթացքին, վարժարանի Մանկապարտէզէն-Ը. կարգի աշակերտները իրենց հայերէնի պահերուն, Տօքթ. Ռուբինա Փիրումեանի պատրաստած Հայոց Ցեղասպանութեան Ուսուցման ծրագրին մէջ տեղ գրաւած, մանկավարժական մօտեցումներով նշուած նիւթերուն ու աշխատանքներուն հետեւելով, մօտէն ծանօթացան Եղեռնի իրողութեան: Այս ծիրէն ներս, Դ. կարգի աշակերտները ամէն տարի կ՛ընթերցեն Ալիծ Աղպապեանի «Ծալապատիկը» եւ հանդիպում մը կ՛ունենան հեղինակին հետ: Այս տարի, Ալիծը մեր դպրոցը այցելեց մայիս 8ին, եւ Դ. կարգի աշակերտներուն հետ հանդիպելով խօսեցաւ իր գիրքին մասին եւ պատասխանեց աշակերտներուն ունեցած հարցումներուն: Շահեկան էր այս հանդիպումը այն իմաստով, որ Տիկ. Ալիծը նոր վերադարձած էր Տէր Զօր անապատի իր ուխտագնացութենէն եւ իր հետ բերած նկարներով ու պատմութիւններով, շարժեց աշակերտներուն հետաքրքրութիւնն ու գութը:*

*Տեղին է շնորհակալութիւն յայտնել Հայկական Բաժանմունքի ուսուցչուհիներուն՝ Տիկ. Կարին Սեոյլեմեզեանին, Տիկ. Յոլինէ Գէորգեանին, Տիկ. Անահիտ Զէյթունեանին եւ Տիկ. Լիզա Մանոյեանին, որոնց ղեկավարութեամբ ու հետեւողութեամբ պատրաստուեցան աշակերտները, ինչպէս նաեւ յատուկ շնորհակալութիւն երաժշտութեան ուսուցչուհին՝ Օրդ. Էլմիրա Սիմոնեանին իր ունեցած ներդրումի համար:*

## ՊԱՐԻ ՈԳԵՂԵՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 8–էն*

*րուսույցները տուեալ սկզբունքով են ղեկավարւում նույնիսկ մանուկներին պարել սովորեցնելիս: Այս նպաստում է, որ հանդիսատեսը կարողանայ նկատել ու զգալ իրարանման ու տարբերակուող կտորների նրբութիւններն ու էութիւնը: Այդ ճանապարհով նա գնահատում է ծրագրի ողջ գեղարուեստական հարստութիւնը:*

*Ծրագրի գլխաւոր նպատակներից է նաեւ բացայայտել ու ապացուցել պարային պլաստիկայի, կերպարների, պատկերների ոգեղենութիւնը, հոգեւոր խորքը: Այդ ճշմարտութիւնն է յայտարարում «Կարաւան» Ակադեմիան հենց սկզբից: Պարային շարժումները այն նիւթական արտայայտչամիջոցներն են, որոնց մէջ խտացուած են դարերի ընթացքում մշակուած ժողովրդական հոգեւոր եւ իմացական փորձառութիւնը: Տեղին է յիշել, որ պարարուեստը առաջացել է որպէս պաշտամունքի եւ աշխատանքային գործունէութեան համադրուածք: Մարդը դեռ իր պատմութեան արեւածագին իր աշխատանքային գործունէութիւնն ու աղօթքը արտայայտել է շարժումների, մարմնի պլասիկայի միջոցով: Այս երեւոյթը խորացել ու զարգացել է քաղաքակրթութեան հոլովոյթին զուգահեռ: Այսօր պարարուեստը հոգեւոր մշակոյթի ինքնատիպ տեսակ է: Քանի այն հոգեւոր է, ապա աղերս ունի ինչպէս տեղական ու ազգային առանձնայատկութիւնների, այնպէս էլ յաւիտենականութեան եւ համամարդկային իրականութեան հետ*

*Ծրագիրը տպաւորիչ է նաեւ իր բազմազանութեամբ: Այնտեղ ներկայացուել են ինչպէս ազգային, այնպէս էլ այլ ժողովուրդների պարերը (ամերիկեան, վրացական, կելդական, իռլանդական, յունական, գնչուական, հնդկական, մոլդովական եւայլն): Այնտեղ ցուցադրւում է ոչ միայն պարային ժողովրդական ոճը, այլեւ դասական բալետի, արդիական բալետի հնարքները ու դրանց համադրութիւնը հանդիսացող ինքնատիպ միջոցները: Ծրագիրը ընդգրկում է ինչպէս յուզական, զգացական, վիպական ու առասպելական բնոյթի, այնպէս էլ կորովի, աշխոյժ ու մարտական պատկերաւորումներ: Այն տալիս է նաեւ մենակատարական ու խմբային համարներ, երգի ու պարի համադրութիւններ:*

*Արժանի բարձր գնահատականը պէտք է մատուցել Ա. Մուշխամբարեանին իր նորաձեւած բարձրաճաշակ զգեստների համար: Դրանք զգալիօրէն նպաստեցին ծրագրի գեղարուեստական արտայայտչականութեան: Նուազ դեր չունեցան նաեւ Արա Գէորգեանի եւ Անդրանիկ Մուրադեանի երաժշտական մշակումները:*

*Հիմնաւորուած է «Կարաւան» Ակադեմիայի ղեկավարութեան այն մտադրութիւնը, որով ձգտում է որպէսզի ծրագիրը արտացոլի նաեւ հաստատութեան ուսուցման ծրագիրն ու ընթացքը: Այն արտացոլում է թէ ինչպէս է աճել պարարուեստի աշխարհը նոր մուտք գործած մանուկը իր առաջին քայլերից մինչեւ վարպետութիւն: Ակադեմիայի գեղարուստական ղեկավար Ռուբէն Նիկոլեանը, նրա տեղակալ Էդկար Նիկոլեանը, պարուսույցներ Կարինէ Գալուստեանը եւ Պրենի Հոնարչեանը կարող են արդարացիօրէն հպարտանալ, որ իրենց յաջողուել է պատրաստել այնպիսի վարպետ մենակատարներ, ինչպիսիք են Ռիտա Ալաջաջեանը, Հելէն Մանասեանը, Անրդրէա Մարտիրոսին, Լիլիան Յակոբեանը, Յովհաննէսեան Նատալին, Անի Ռշտունին, Մարի Ռշտունին, Սուզաննա Սարգսեանը, Էդուին Սարգսեանը, Սելինա Շաւագեանը, որոնք իսկապէս առինքնեցին հանդիսատեսին: Իսկ հանդիսատեսը իր խորին երախտագիտութիւնն է յայտնում Բժիշկներ Գրիգոր եւ Սրբուհի Տէր Յովհաննեսեանների անուան «Կարաւան» Ակադեմիայի ողջ անձնակազմին իրենց մեծ գեղարուստական հաճոյք պարճառելու եւ մեր նոր սերունդի գեղագիտական դաստիարակութիւնը նախանձելի բարձրութեամբ իրականացնելու համար:*

## ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

*Շարունակուած էջ 1–էն*

*չութեան տնօրէնի պաշտօնին:*

*Նիստի վերջաւորութեան Սերժ Սարգսեան ըսած է թէ, նկատի ունենալով որ Հոգաբարձուներու Խորհուրդի կազմը կը ներառէ Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր առանցքային կառոյցներու ղեկավարները եւ խոշորագոյն հայկական համայնքներու ներկայացուցիչները, ինք որոշած է այսուհետեւ օգտագործել այս նիստերը՝ ներկայացնելու համահայկական նշանակութեան խնդիրները եւ առկայ զարգացումները: Այնուհետեւ, ան անդրադարձած է հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորմանն ուղղուած ջանքերուն եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման բանակցային գործընթացին:*

## ԴԷՊԻ ՄԱՀ: ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ ԵՒ (ՎԱՐԴԳԷՍ)

*Շարունակուած էջ 14–էն*

*Խալիլ պէյը եղած է, էնվէրի մէկ ազգականը, որ յետոյ Պաղտատի թրքական բանակին հրամանատար կարգուեցաւ, անշուշտ Զօհրապն ու Վարդգէսը սպաննելու քաջագործութեանը իբրեւ վարձատրութիւն:*

*Ոճրագործները կառքը կը կեցնեն եւ կը հրամայեն երկու աքսորականներուն կառքէն վար իջնել: Զօհրապ կ՛իջնէ, մինչ Վարդգէս կը պոռայ.*

*-Ոչ, վար չեմ իջներ, կառքին մէջ մեռցուցէք զիս:*

*Այսպէս կը նահատակուին Զօհրապ եւ Վարդգէս, հայ ազգին երկու ազնուական զաւակները: Կառապանը, որ ինքզինք թուրք կեղծող հայ մըն է եղեր, կը վերադառնայ Հալէպ եւ ինք է, որ պատմած է եղելութիւնը իր մանրամասնութիւններով:*

*Ջէթէները՝ բնականաբար՝ կը կողոպտեն իրենց զոհերը:*

*Զօհրապի նշանտուքի մատանին ու ժամացոյցը ծախուած են Հալէպի մէջ: Իր փէսը, կը գտնուի եղեր, չեմ գիտեր ինչպէս, միսիօնարուհիի մը քով:*

*Վարդգէսէն որեւէ հետք չէ մնացած:*

*Թող իրենց յիշատակը անջինջ մայ ամենուս մտքին մէջ:*

## ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

*Ողբացեալ ՎԱՉԷ ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆի մահուան առաջին տարելիցին առիթով Իգնատիոսեան Եղբայներ եւ իրենց ընտանիքները կը նուիրեն՝*

*«Նոր Օր» շաբաթաթերթին $100*

*«Մասիս» շաբաթաթերթին $100*

**PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրւում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

*Մանրամասների համար հեռաձայլ*

**(818) 246-0125**

Վարձման գներն են՝

| | |
|---|---|
| Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ | $ 400 |
| Long Weekend-ների համար՝ | $ 500 |
| Մէկ շաբաթուայ համար՝ | $ 675 |
| Մէկ ամսուայ համար՝ | $ 1450 |



# ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ

## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ

CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԵՍԷՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

# ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

**INVITATION FOR BIDS (IFB) NO. 1668 THE REHABILITATION OF AN EXISTING 28-UNIT APARTMENT BUILDING**

**The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for the Rehabilitation of A Vacant Two-Story Courtyard Apartment Building (of 13,045 sq. ft.) located at: 461 W. 87th Street, Los Angeles, CA 90003. Copies of the IFB may be downloaded from the internet at www.HACLA.org/constgs. Copies may also be obtained, at no charge, at the Authority's General Services Department, 2600 Wilshire Boulevard, Suite 3100, Los Angeles, CA 90057. Bids will be accepted at the same location until 2:00 p.m. (local time), June 5, 2009.**

5/14, 5/21/09
CNS-1582564#
MASSIS WEEKLY

# ՔԱՋ ՆԱԶԱՐ

## ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 280-րդ կայանից

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՖՈՒԹՊՈԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ



*8-րդ տուրի հանդիպումներով մեկնարկեց ֆութպոլի Հայաստանի առաջնութեան 2-րդ շրջանը, որի կենտրոնական խաղում գրանցուեց խոշոր հաշիւ:*

*2-րդ հորիզոնականում ընթացող «Բանանց»ը հիւրընկալել էր առաջատար «Փիւնիկ»ին: Մրցաշարային աղիւսակի առաջին 2 տեղերում գտնուող թիմերի մրցավէճի ելքը վճռուեց ի նպաստ «Փիւնիկ»ի 4:1 հաշուով:*

*Լաւագոյն եռեակը եզրափակող «Միկա»ն այս տուրում 2:0 հաշուով առաւելութեան հասաւ Կապանի «Գանձասար»ի նկատմամբ:*

*Հերթական պարտութիւնը կրեց Երեւանի «Արարատ»ը, որը սեփական յարկի տակ 1:3 հաշուով զիջեց Գիւմրիի «Շիրակ»ին:*

*«Ուլիս»ը Հրայր Մկոյեանի միակ կոլի շնորհիւ 1:0 հաշուով պարտութեան մատնեց «Կիլիկիա»յին եւ 16 միաւորով ամրապնդուեց 4-րդ հորիզոնականում:*

Մրցաշարային աղիւսակ

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Փիւնիկ | 8 | 7 | 1 | 0 | 21-3 | 22 |
| 2. Բանանց | 8 | 6 | 0 | 2 | 12-8 | 18 |
| 3. Միկա | 8 | 5 | 2 | 1 | 15-8 | 17 |
| 4. Ուլիս | 8 | 5 | 1 | 2 | 8-5 | 14 |
| 5. Շիրակ | 8 | 2 | 1 | 4 | 10-14 | 10 |
| 6. Կիլիկիա | 8 | 2 | 0 | 6 | 6-12 | 6 |
| 7. Գանձասար | 8 | 1 | 1 | 6 | 4-13 | 4 |
| 8. Արարատ | 8 | 0 | 0 | 8 | 1-14 | 0 |

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ

## ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒ ՑՈԼԱԿ ԱՆԱՆԻԿԵԱՆ ՉԵԽԻԱՅԻ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹԵԱՆ ԱԽՈՅԵԱՆ

*Երկու հայ բռնցքամարտիկներ՝ Անդրանիկ Յակոբեանը (75կգ) – Ցոլակ Անանիկեանը (91կգ), յաղթելով եզրափակիչ հանդիպումները, դարձան չեխական Ուստի Նադ Լաբեմ քաղաքում աւարտուած Չեխիայի բաց առաջնութեան ախոյեան: Անդրանիկ Յակոբեանը 2008թ. աշխարհի գաւաթակիր է, իսկ Ցոլակ Անանիկեանը՝ 2008թ. Եւրոպայի արծաթէ մետալակիր:*

*2008թ. Եւրոպայի փոխախոյեան Յովհաննէս Դանիէլեանը (51կգ) – Եւրոպայի պատանիների կրկնակի ախոյեան Ազատ Յովհաննիսեանը (57կգ) նուաճեցին արծաթէ մետալներ:*

*Յայտնում են Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի մամուլի կենտրոնից:*




## ԱՓՐԻԿԷ 2010 ՄՈՆՏԻԱԼԸ

***ՀԱՄԱԴՐԵՑ՝ ԱՐՕ ՊԷԼԵԱՆ***




*Վստահ եմ բոլոր աշխարհը պիտի սիրէ Ափրիկէն կ՛ըսէ Զիտան:*

*Հարաւային Ափրիկէ կը գտնուի աշխարհահռչակ ֆութպոլիստ 1998ի մոնտիալի ախոյեան Զէյնէտին Զիտան որ իր արձանագրած բազմաթիւ կոլերով Ֆրանսայի պարգեւեց այդ եւ ուրիշ մեծ յաղթանակներ եւ դարձաւ ֆրանսացիներու ամենասիրուած խաղաղորդը:*

*Fifa.com-ի հարցազրոյց մը տալով Զիտան կ՛ըսէ. «Հարաւ Ափրիկէն սքանչելի երկիր մըն է: Իսկապէս շատ լաւ տպաւորուած եմ եւ կը վայելեմ այս այցելութիւնը եւ վստահ եմ որ բոլոր աշխարհը պիտի սիրէ Հարաւ Ափրիկէն»:*

*Դուք ունիք ալճերական ծագում: Ի՞նչպէս կը գնահատէք 2010-ի Մոնտիալը, որ առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ ափրիկեան ցամաքամասի վրայ: Զիտան կ՛ըսէ. «Հրաշալի բան մըն է ափրիկեան ֆութպոլի համար, որ Մոնտիալ մը պիտի խաղցուի իր հողին վրայ եւ ան շատ գեղեցիկ առիթ մը պիտի ըլլայ ցոյց տալու երկրագունդին իր կարելիութիւնները, 1998ի Մոնտիալին այդ մէկը կրցանք հաստատել թէ ինչ կը նշանակէ խաղալ իր սեփական հողին վրայ:*

*Այնուհետեւ անուանի ֆութպոլիստը կը պատմէ իր ապրումները 1998-ի յաղթանակէն ետք ու կ՛ըսէ. «Իմ յիշողութեանս մէջ անմոռանալի է ժողովուրդի մեծ ցնծութիւնները: Մարդիկ իրարու կը փաթթուէին փողոցը: Ամէն հանգամանքի եւ տեսակի անձեր էին, սեւ, ճերմակ, շատեր ուրախութեան արցունքներ կը թափէին, կը սպասեն որ այս բոլորը կրկնուի Հարաւ Ափրիկէի մէջ:*

*Մոնտիալներու պատմութեան մէջ անմոռանալի պիտի մնայ այն դէպքը, որ պատահեցաւ Գերմանիա 2006ի ֆինալի մրցումին, Իտալա-Ֆրանսա եւ յանկարծ Զիտան գլխու հարուած մը տուաւ Մաթարացիի կուրքծին եւ տապալեց զայն եւ ստացաւ կարմիր քարտը:*

*Զիտան այս մասին չուզեր արտայայտուիլ եւ կ՛ըսէ թէ շատ խօսուեցաւ եւ գրուեցաւ այդ մասին եւ անիկա պատմութեան անցած է եւ ապա կ՛եզրակացնէ. «Անիկա մեծ մրցում մը եղաւ: Ի հարկէ կ՛ուզէինք յաղթել, բայց այդպէս չեղաւ»:*

*Մոնտիալէն առաջ, 2006 թուականին Զիտան հրաժեշտ տուաւ ֆութպոլի դաշտերէն, վերջին անգամ խաղալով Սպանիոյ հռչակաւոր Ռէալ Մատրիտ խումբէն, որուն ալ մեծ յաղթանակներ պարգեւած էր:*

*«Շահիլ Աշխարհի Բաժակը մեր երկրի մէջ, սքանչելի բան մըն է, զայն կը համարեմ իմ կեանքի ամենայաջող իրագործումը», կ՛ըսէ, Զիտան որ կ՛աշխատի իր նպաստը բերել Ափրիկէ 2010 Մոնտիալի կազմակերպութեան:*

## ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

*Անթալիայում աւարտուած երիտասարդների ազատ ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարում Հայաստանը արժանացել է մէկ պրոնզէ մետալի:*

*Հայաստանի հաւաքականի կազմում ընդգրկուած 6 ըմբիշներից մրցանակային տեղ է գրաւել միայն 50 կգ քաշային Մաթեւոս Դաւթեանը, որը 2007 թ. Եւրոպայի պատանեկան առաջնութեան յաղթող է, իսկ այժմ ելոյթ է ունենում երիտասարդների պայքարում:*

*****

*Բելգիայի Հերենտալ քաղաքում կայացել է ճիւտոյի միջազգային պատանեկան մրցաշար, որտեղ բաւական յաջող է հանդէս եկել Հայաստանը:*

*Առաջին հորիզոնականում են յայտնուել 48 կգ Երջանիկ Կարապետեանը, 50 կգ Գարիկ Յարութիւնեանը, 55 կգ Դաւիթ Նիկողոսեանը, 60 կգ Դաւիթ Ղազարեանը, 73 կգ Մհեր Թաւաքալեանը, 81 կգ Արթուր Կռոյեանը, իսկ 81 կգ Արման Սողոմոնեանը եւ 60 կգ Գէորգ Թորոսեանը գրաւել են 2-րդ հորիզոնականը:*

*****

*Իտալիայի Միլան քաղաքում աւարտուեց սամբոյի Եւրոպայի տղամարդկանց եւ կանանց առաջնութիւնները, որին մասնակցեց նաեւ Հայաստանի հաւաքականը:*

*62 կգ քաշայինների պայքարում Վահան Յովհաննիսեանը, յաղթելով լիտվացի մրցակցին, դուրս եկաւ քառորդ եզրափակիչ, որտեղ առաւելութեան հասավ Ատրպէյճանի ներկայացուցիչ Յաշար Աբասովի նկատմամբ: Կիսաեզրափակիչում Յովհաննիսեանը զիջեց վրացի Դաւիթ Սիմոնիշվիլիին: 3-րդ տեղի համար մրցամարտում Վահանը յաղթեց ֆրանսացի Անտոնի Լոբրեչին եւ դարձաւ պրոնզէ մետալակիր:*

*Պրոնզէ մետալի արժանացաւ նաեւ 68 կգ քաշային Դաւիթ Խաչատրեանը: Վերջինս առաջին մրցամարտում պարտուեց Ատրպէյճանը ներկայացնող Թարլան Քարիմովին: Ատրպէյճանին դուրս եկաւ եզրափակիչ, ուստի Խաչատրեանը իրաւունք ստացաւ պայքարել պրոնզէ մետալի համար եւ հասաւ յաջողութեան: Վճռորոշ մրցամարտում Դաւիթ Խաչատրեանը յաղթեց պուլկարացի Ստեփան Շոպովին:*

*57 կգ քաշայինների պայքարում 23-ամեայ Վահան Վարդանեանը պարտուեց ատրպէյճանցի Իսլամ Ղաշիմովին: Այս քաշային կարգում արծաթէ մետալի արժանացաւ Ռուսաստանը ներկայացնող հայ սամբիստ Արմէն Բիձհոսեանը:*

*Կանանց պայքարում պրոնզէ մետալի արժանացաւ 48 կգ քաշային Ժաննա Վարդանեանը: Այս քաշային կարգում պայքարի մէջ մտան ընդամէնը 6 մարզուհիներ:*

*Կայացաւ նաեւ մարտական սամբոյի Եւրոպայի առաջնութիւնը, որտեղ պրոնզէ մետալի արժանացաւ միայն 68 կգ Վաչիկ Վարդանեանը:*